*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք*

# ԱՍՖԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՈՒ ՀԱՄ. Կ(բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՅԵՎ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՈՒ ՀԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 1934 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՅԱՆԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ


Կ Ո Ւ Ս Հ Ր Ա Տ

1 9 3 4

2 JAN 2018

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Ա-11

# ԱՍՖԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՈՒ ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐԵՐԿՈՄԻ ՅԵՎ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՈՒ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 1934 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՐԽԻՎ

ԿՈՒՍՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ
II-24899գր

О плане весеннего сева и мероприятиях по развитию сельского хозяйства на 1934 год

Постановления СНК ЗСФСР, ЗКК ВКП(б), СНК Армении и ЦК КП(б) А.

Партиздат 1934 Эривань

## ԱՍՖԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ 1934 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

*Անդրժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը հատկապես ընդգծում են, վոր 1934 թվականի գարնան գյուղատնտեսական կամպանիայի կենտրոնական խնդիրն է հանդիսանում՝ կոլտնտեսությունների հետագա կազմակերպչական-տնտեսական ամրացումը, գյուղատնտեսական աշխատանքների վորակն ամեն կերպ բարձրացնելը և բերքատվության բարձրացումը, մենատնտեսներին գաղափարական-քաղաքական ազդեցությամբ ու ղեկավարությամբ ընդգրկելը և բոլշևիկյան պայքարը՝ «բոլոր կոլտնտեսությունները բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին ունևոր դարձնելու» վերաբերյալ ընկ. Ստալինի ցուցումի լրիվն կատարման համար։*

*Յելնելով այդ խնդիրներից, ԱՍՖԽՀ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը վորոշում են՝*

*1. 1934 թվականի գարնան համար գարնանացան կուլտուրաների ցանքի պլանը հաստատել 1.400.860 հեկտարի չափով, հետևյալ բաշխմամբ՝ ըստ հանրապետությունների, սեկտորների և կուլտուրաների (հազ. հեկտ.*)։*

*2. Առաջարկել հանրապետությունների ժողկոմխորհներին և կենտկոմներին՝ տասն որվա ընթացքում ճշտել և վերջնականապես սահմանել գարնանացանի տարածությունն ըստ խորհտնտեսությունների—գործկոմների բանմատակարարման բաժինների, սպառկոոպերացիայի սիս-*

*) Տես աղյուսակը վերջում։

տեմի, Մատժողկոմատի և Պետքաղվարչության Տնտեսական բաժնի և ներկայացնել Անդրժողկոմխորհի հաստատությանը։

3. Սահմանել, վոր կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների կողմից պետությանը պարտադիր կարգով հացահատիկ հանձնելը պետք է կատարվի միայն այն տարածությունից, վորը սահմանված է նրանց համար, այս վորոշման հիման վրա։ Կոլտնտեսությունների ու անհատական աշխատավորական տնտեսությունների կողմից այս պլանից դուրս ցանված տարածություններից պետությանը պարտադիր կարգով հացահատիկ չի հանձնըվում։

4. Առաջարկել Անդրհողժողկոմատին՝ տասն օրվա ընթացքում, յելնելով ԱՍՖԽՀ-ում բազմամյա տնկիների վերաբերյալ ընդունված տարեկան պլանից, սահմանել տընկման պլան գարնան համար, ըստ հանրապետությունների, սեկտորների և կուլտուրաների։

5. Առաջարկել հանրապետությունների Ժողկոմխորհներին ու Կենտկոմներին և Անդրհողժողկոմատին ու հանրապետությունների Հողժողկոմատներին՝—

ա) տասն օրվա ընթացքում շրջաններին, կոլտնտեսություններին ու մենատնտեսներին հասցնել ցանքի պլանները, նաև կայուն առաջադրանքներ տալ կուլակային ունևոր տնտեսություններին։ Ապահովել պլանների լայն քննարկումն ու մշակումը շրջաններում, կոլտնտեսություններում և գյուղխորհուրդներում, բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնել՝ վոչ ուշ քան մինչև փետրվարի մեկն ավարտելու խորհտնտեսությունների ֆինանսական պլանները կազմելու գործը և կոլտնտեսային առանձին բրիգադներին արտադրական առաջադրանքներ տալը։

բ) Կազմակերպել կոլտնտեսություններում որինակելի նորմաների ու գնահատումների լայն քննարկումը, մանրա-



ցնին կերպով հաշվի առնելով 1933 թվականի փորձը և յուրաքանչյուր կոլտնտեսության կոնկրետ պայմանները՝ առանձին վերցրած։

Նախազգուշացնել բոլոր հողային մարմիններին և կոլտնտեսությունների վարչություններին, վոր աշխատանքի նորմաները պետք է շերտավորված լինեն վոչ միայն ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության, այլև ըստ յուրաքանչյուր բրիգադի՝ հաշվի առնելով բրիգադներին ամրացված հողամասերի վորակը և քաշող ուժի վիճակը։

գ) Ապահովել սերմացվի (հատկապես կերաբույսերի) ներմուծումն ու բաշխումը սահմանված ժամկետներին, տեղերում մոբիլիզացիայի յենթարկել սերմացվի ներքին ռեսուրսները, կազմակերպել սերմացվի միջկոլտնտեսային փոխանակումը և միջշրջանային փոխադրումները՝ սիստեմատիկ վերահսկողություն սահմանել նրանց օգտագործման նկատմամբ։

դ) Բոլոր շրջաններում, կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում կազմակերպել կենդանի քաշող ուժի վիճակի լայն ստուգում, քաշող ուժի կերով ու լծասարքերով ապահոված լինելու տեսակետից, բանող անասունների համար՝ գարնանային դաշտային աշխատանքները սկսելուց առաջ՝ սահմանել յերկշաբաթյա հանգիստ։

6) Առաջարկել Անդրհողժողկոմատին ու հանրապետությունների Հողժողկոմատներին և խորհտնտժողկոմատի Լիազորությանը՝

ա) Տասն օրվա ընթացքում ճշտել սերմացվի բալանսը ըստ բոլոր կուլտուրաների և պարտավորեցնել հանրապետությունների «Սայուզսեմենովոդ»-ներին՝ ապահովելու նրանց ժամանակին ներմուծումն ու մ[illegible]երումը։ Մինչև փետրվարի մեկը բոլոր շրջաններում ու կոլտնտեսություններում կազմակերպել ցանվելիք նյութերի վորակի ստուգման գործը (ծլունակություն, մաքրություն և այլն)

նաև առանձնացված սերմացվի ֆոնդերի զտման վորակը և սերմացուն աղբակալված լինելու դեպքում, անմիջապես միջոցներ ձեռք առնել այն լրացուցիչ կերպով զտելու ուղղությամբ։

բ) Մինչև մարտի մեկն ավարտել տրակտորային վողջ պարկի, ավտոմեքենաների, գյուղատնտեսական մեքենաների և այլ ինվենտարների վերանորոգումը։ Առաջարկել Խորհտնտեսությունների Մատակարարման Անդրկովկասյան Լիազորությանը (Զակուպոլսովխոզսնաբ), Գյուղատնտեսության Մատակարարման Անդրկովկասյան Լիազորությանը (Զակուպոլսելխոզսնաբ) և հանրապետությունների սելխոզսնաբներին ապահովել հողը և ցանքերը մշակելու համար անհրաժեշտ գյուղատնտեսական մեքենաների ժամանակին ներմուծումն ու իրացումը—վոչ ուշ քան մարտի մեկը, իսկ բերքահավաքի մեքենաների, խուրձ կապելու շպագատի, քաղհանի ու մշակման մեքենաների ներմուծումը վոչ ուշ քան մինչև ապրիլի 25-ը։

7) Առաջարկել հանրապետությունների կենտկոմներին և ժողկոմխորհներին —

ա) Հատուկ վերահսկողության տակ առնել ՎԱՏՈ-ի պահեստի մասերի մատակարարման հանրապետական գրասենյակների աշխատանքները՝ վերանորոգման պլանների համաձայն տրակտորների պահեստի մասերը ժամանակին ներմուծելու համար։

բ) Տասն որվա ընթացքում ստուգել նոր ՄՏԿ-ների կազմակերպման ուղղությամբ կատարվող աշխատանքների վիճակը (Ադրբեջանի ՍԽՀ-ում 7, ՀՍԽՀ-ում 4, ՎՍԽՀ-ում 4) և միջոցներ ձեռք առնել, վորպեսզի նրանք լիակատար կերպով պատրաստ լինեն գարնանային աշխատանքներն սկսելուն։

8) Առաջարկել Անդրյերկաթուղիների դիրեկցիային



ապահովել գարնանացանի կամպանիան ապահովելու համար անհրաժեշտ բոլոր բեռների անընդմեջ փոխադրումը։

9) Առաջարկել հանրապետությունների ժողկոմխորհներին, Անդրհողժողկոմատին, հանրապետությունների Հողժողկոմատներին ու Ջրտնտեսություններին և Ադրբեջանի Տրակտորկենտրոնին՝

ա) Տասն որվա ընթացքում ավարտել վոռոգման սիստեմի մաքրման պլանների մշակումը և քննարկումը շրջաններում։ Փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը անցկացնել վոռոգման սիստեմի մաքրման միամսյակ, կարգի բերել ծանծաղ ու չափազանց ծանծաղ ցանցը։ Վոչ ուշ քան մինչև մարտի 20-ն ավարտել բոլոր ջրհանների ու քյահրիզների վերանորոգումը՝ ապահովելով վերանորոգման բարձր վորակը։

բ) Վոչ ուշ քան մինչև մարտի 25-ն ավարտել վողջ իրիգացիոն ցանցի և կառուցումների ընթացիկ վերանորոգումը, մարտի 15-ից մինչև ապրիլի 15-ը կատարել ընդունումը և ստուգել, թե վոռոգման սիստեմն ու ջրհանները վորքանով են նախապատրաստված ջրելու աշխատանքներին։

գ) Վոչ ուշ քան մինչև փետրվարի մեկը ճշտել ջրելու նորմաներն ու ժամկետներն ըստ առանձին շրջանների ու կուլտուրաների և այդ նորմաները հասցնել շրջաններին այն հաշվով, վորպեսզի մինչև մարտի մեկը տեղերում ավարտված լինի ջրելու պլանների կազմումն ըստ բոլոր կուլտուրաների՝ այդպիսիք կապակցելով ցանքի պլանների հետ։

10. Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացումն ապահովելու նպատակով՝

ա) Առաջարկել հանրապետությունների ժողկոմխորհներին ու կենտկոմներին՝ պարտավորեցնել շրջգործկոմներին, մինչև փետրվարի 5-ը բոլոր շրջաններում հրապարակելու պարտադիր ագրոկանոններ հիմնական կուլտուրաների վերաբերյալ, ապահովելով վերահսկողությունը նրանց կատարման նկատմամբ. բոլոր կոլտնտեսություններում մշա-

կել ագրոկանոններ ու ագրոնարյադներ, բրիգադներում կազմակերպել ագրովերահսկման հանձնաժողովներ, վորակի տեսչություններ, նրանց վրա դնելով ագրո-ձեռնարկումների կիրառման պատասխանատվությունը։

բ) Առաջարկել Անդրհողժողկոմատին, Խորհտնտժողկոմատի Անդրկովկասյան Լիազորությանը և Վնասատուների դեմ Պայքարող Ընկերության (ՈԲՎ) Անդրկովկասյան Բաժանմունքին, տասն օրվա ընթացքում վերջնականապես սահմանել գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու ձեռնարկումների ծավալը և ներկայացնել այն Անդրժողկոմխորհին։ Պարտավորեցնել ՈԲՎ-ի Անդրկովկասյան Բաժանմունքին և բոլոր շահագրգռված տնտեսական մարմիններին՝ մինչև փետրվարի մեկն ավարտել գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու ձեռնարկումների կիրառման վերաբերյալ պայմանագրերի ձևակերպումը։ Առաջարկել ՈԲՎ-ի Անդրկովկասյան Բաժանմունքին՝ ապահովել ապարատուրայի վերանորոգումն ու այն, ինչպես և թույները ժամանակին շրջաններին, խորհտնտեսություններին ու կոլտնտեսություններին հասցնելը՝ պահանջվող քանակությամբ։

գ) Առաջարկել Անդրհողժողկոմատին, Սելխոզնաբի ԱՍՖԽՀ Լիազորությանը և հանրապետությունների Հողժողկոմատներին, ապահովել հանքային պարարտանյութերի ժամանակին ներմուծումը, վոչ ուշ քան մինչև փետրվարի մեկն ավարտել հանքային պարարտանյութերով պարարտացնելու պլանները կոլտնտեսություններին հասցնելը և կոլտնտեսություններում կազմակերպել նրանց լայն քննարկման գործը։ Հանքային պարարտանյութերի ճիշտ օգտագործման պատասխանատվությունը դնել ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների դիրեկտորների վրա։ Պարարտանյութերի խառնումն ու օգտագործումը և նրանց նկատմամբ հրահանգումը կատարել ագրոանձնակազմի անմիջական



հսկողությամբ։ Հանքային պարարտանյութերով պարարտացնելիս, ապահովել յեղած պարարտանյութեր ցանող մեքենաների հարյուր տոկոսային օգտագործումը։ Տասն օրվա ընթացքում ավարտել ՄՏԿ-ների կոմպլեկտավորումը քիմիական պարարտացման պարագաներով։ Առաջարկել հանրապետությունների Ժողկոմխորհներին՝ հատուկ հսկողության տակ առնել հանքային պարարտանյութերի համար պահեստների կառուցումը և պարարտանյութերի պահպանումն ու օգտագործումը։ Հատուկ ուշադրություն նվիրել գոմաղբային պարարտանյութերի լրիվ օգտագործմանը, կազմակերպելով նրանց ճիշտ պահպանումը, ժամանակին դաշտ փոխադրելը և դաշտում փռելը։

դ) Առաջարկել հանրապետությունների Ժողկոմխորհներին ու Կենտկոմներին, Անդրհողժողկոմատին և հանրապետությունների Հողժողկոմատներին՝ տասն օրվա ընթացքում սահմանել կոլտնտեսություններում ցանքաշրջանառության կիրառման վերջնական պլանը (յելնելով Անդրժողկոմխորհի 1933 թվականի նոյեմբերի 22-ի վորոշումից) բրիգադային հողամասերն առանձնացնելով գարնանացանի համար, այդ աշխատանքի ընթացքում հատուկ ուշադրություն նվիրել հողա-ջրաշինարարությանը։ Տեղերում կազմակերպել կոլտնտեսություններում ցանքաշրջանառություն կիրառելու աշխատանքների ընթացքի սիստեմատիկ ստուգում կոլտնտեսականների լայն մասնակցությամբ. 1934 թվականին ցանքաշրջանառությունը կիրառել բոլոր խորհտնտեսություններում։

յե) Առաջարկել հանրապետությունների Ժողկոմխորհներին և Անդրհողժողկոմատին՝ ապահովել ցանքի պլանների անպայման կատարումը սերմնաբուծական խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում, նաև ապրանքա-տեսակային ցանքերի պլանների կատարումը։ Մինչև ապրիլի տասը, ինչպես սերմնաբուծական, այնպես

և վոչ սերմնաբուծական կոլտնտեսություններում ու խորհ-
տնտեսություններում հաշվի առնել նախկին տարիներում
ցանված բազմամյա խոտաբույսերի ցանքերը (կապույտ
առվույտ, եսպարցետ, առվույտ), լավագույն հողամասերն
առանձնացնել սերմարանների համար՝ ապահովելով նրանց
պահպանումը անասուններին ուտեցնելուց և վորպես խոտ
հնձելուց։Բոլոր սերմնաբուծական խորհտնտեսություններում
ու կոլտնտեսություններում կատարել աշնանացան հացա-
հատիկների ցանքերի պարտադիր քաղհան՝ մինչ նրանց
—հասկեր գցելը։

գ) Առաջարկել Անդրհողժողկոմատին և հանրապետու-
թյունների Հողժողկոմատներին ու տրակտորկենտրոններին՝
բոլոր շրջաններում, ուր աշնանավար է կատարվել հացա-
հատիկային կուլտուրաների համար, այդ հողամասերը վաղ
գարնանը ցաքանել։ Մոլախոտերի դեմ սիստեմատիկ պայ-
քար մղելու նպատակով, կատարել մոլախոտերով աղբա-
կալված հացահատիկային ցանքերի քաղհան, միջնակները,
ճանապարհներն ու առուները հնձելու միջոցով և այլն։

Հացահատիկային կուլտուրաների շարքացան ԱՍՖԽՀ-ում
կատարել 62,8 հազար հեկտար տարածության վրա, դրանից
Ադրբեջանի ԽՍՀ-ում 10 հազար հեկտար, ՀՍԽՀ-ում 31
հազար հեկտար և ՎՍԽՀ-ում 21,8 հազար հեկտար։ Ցանն
որվա ընթացքում վերջնականապես սահմանել ցանքի նոր-
մաները և ցանքերն սկսելու ու վերջացնելու ժամկետները,
ըստ շրջանների։ Ապահովել սերմացուն 100 տոկոսով զտելը՝
լիովին օգտագործելով սերմազտիչ մեքենաները, ինչպես
և հացահատիկային կուլտուրաների սերմացուն 100 տոկոսով
ախտահանելը՝ մրիկով վարակված բոլոր շրջաններում։

ե) Առաջարկել Ադրբեջանի ՍԽՀ ժողկոմխորհին և
Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմին՝ տասն որվա ընթացքում
մշակել չալթուկային տնտեսության կազմակերպման ուղ-
ղությամբ կիրառվելիք կոնկրետ ձեռնարկումների պլանը՝



հատուկ ուշադրություն դարձնելով բերքատվությունը բարձ-
րացնելու ձեռնարկումներին։

ը) Առաջարկել՝ Անդրհողժողկոմատին և Խորհտնտժող-
կոմատի Անդրկովկասյան Լիազորությանը, մինչև փետրվարի
19-ը Անդրժողկոմխորհի քննությանը ներկայացնել վաղ
ցելերը շուռ տալու պլանը՝ ըստ ԱՍՖԽՀ Հանրապետությունների։

թ) Առաջարկել հանրապետությունների ժողկոմխորհներին և Կենտկոմներին՝ հատուկ վերահսկողության տակ
առնել ծխախոտի ջերմոցների վերանորոգումը ու նորերի
կառուցումը՝ այդ աշխատանքներն ավարտելով մինչև
փետրվարի 15-ը։ Մինչև փետրվարի 20-ը ծխախոտագործական շրջաններում ավարտել բաց թումբերը ծխախոտի
ցանքին նախապատրաստելը և ձեռնարկումներ կիրառել
«առջուկի», տնկախտի և արմատախտի դեմ պայքարելու
ուղղությամբ։ Ծխախոտի սածիլների տնկումը բաց թումբերի վրա կատարել 20 տոկոսային պահեստ պահպանելով,
սիստեմատիկ հսկողություն կազմակերպել սածիլների նըկատմամբ և փչանալու յերեվույթներ հայտաբերելու դեպքում, անմիջապես կրկնակի ցանք կատարել։

Ծխախոտի սերմերի ցանքը ջերմոցներում Ադրբեջանի
ԽՍՀ-ում սկսել փետրվարի 25-ից և ավարտել մարտի 25-ը։
ՀՍԽՀ-ում սկսել մարտի մեկից և ավարտել մարտի 25-ին,
ՎՍԽՀ-ում սկսել փետրվարի 20-ից և ավարտել մարտի
4-ին։ Ծխախոտի տնկումն Ադրբեջանի ԽՍՀ-ում կատարել
ապրիլի 20-ից մինչև հուլիսի 15-ը, ՀԽՍՀ-ում մայիսի մեկից մինչև հունիսի 15-ը և ՎՍԽՀ-ում ապրիլի 20-ից մինչև
հունիսի 10-ը։

11. Առաջարկել հանրապետությունների Կենտկոմներին
ու կուսակցության շրջկոմներին և ՄՏԿ-ների քաղբաժիններին՝ մշակել գարնան գյուղատնտեսական աշխատանքների շրջանում դաշտային շարժական արհեստանոցների

ցանցի ծավալման հարցը, նաև ձեռնարկումներ՝ դաշտային աշխատանքների ընթացքում կոլտնտեսությունների կուլտ-կենցաղային սպասարկման ուղղությամբ, գարնան գյուղատնտեսական աշխատանքների շրջանում լայնորեն ծավալելով կուլտուր-կենցաղային սպասարկումը։

12. Առաջարկել հանրապետությունների կենտկոմներին, կուսակցության շրջկոմներին և ՄՏԿ քաղբաժիններին՝ հաշվի առնելով աշխատավոր մենատնտեսների աճող ձըգտումը դեպի կոլտնտեսություններ, որ առաջացել է կոլտնտեսային շինարարության ասպարեզում ձեռք բերված հաջողությունների հիման վրա, կոլտնտեսությունների մեջ նոր տնտեսություններ ընդունելիս վճռական պայքար մղել ինչպես կոլտնտեսությունները կուլակային ու խորթ տարրերի աղտոտման փորձերի, այնպես և մի շարք կոլտընտեսություններում հանդես յեկող ինքնապարփակման և արտադրության մեջ առնված առաջավոր աշխատավոր մենատնտեսներին կոլտնտեսություն չընդունելու տենդենցների դեմ։

13. Առաջարկել հանրապետությունների ժողկոմխորհներին ու կենտկոմներին՝ ապահովել մասսայական հանրամատչելի գրականության՝ բրոշյուրներ, թերթիկներ, պլակատներ՝ ժամանակին հրատարակումը և մասսայական ագրոտեխնիկական պրոպագանդի ծավալումը՝ 1934 թվականի գարնան գյուղատնտեսական կամպանիայի խնդիրների կապակցությամբ։

ԱՍՖԽՀ ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը կրկին անգամ ընդգծում են, որ գարնան գյուղատնտեսական աշխատանքների հաջող անցկացումը կախված է գյուղում մասսայական քաղաքական և կազմակերպչական աշխատանքի ժամանակին նախապատրաստումից ու ծավալումից, շրջանների, կոլտնտեսությունների և գյուղատնտեսության առանձին ճյուղերի նկատմամբ օպերատիվ ու



շերտավորված ղեկավարություն ունենալուց, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների լայն մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելուց, կուլակի ու նրա գործակալության վոտնձգությունների դեմ մղվող ամենորյա պայքարում դասակարգային զգաստությունը բարձրացնելուց։

Խորհրդային, կուսակցական ու հողային մարմինների բոլոր օղակների և ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների քաղբաժինների հստակ աշխատանքով պետք է ապահովվի բոլոր ձեռնարկումների ժամանակին կիրառումը (տեղերում պլաններ մշակելը, տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների վերանորոգումը, բանող անասունների նախապատրաստումը, վառելիքը խնայողաբար ծախսելը և այլն), դրանով իսկ ապահովելով գարնանացանի արտադրական առաջադրանքների անպայման կատարումն ու սոցիալիստական դաշտերի բերքատվության հետագա բարձրացումը։

## ԱՍՖԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ 1934 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ ԿԻՐԱՌՎԵԼԻՔ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անդրժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը նշում են, վոր բամբակի ասպարեզում հիմնական ագրոձեռնարկումները 1933 թվականին զգալիորեն ավելի լավ են կիրառված, քան նախորդ տարիներին — ցանքը հիմնականում կատարվել է սահմանված ժամկետներին, հաջողությամբ անց է կացվել մշակման — քաղհանի ու ջրելու կամպանիան, վորի հետևանքով նախորդ տարվա համեմատությամբ բարձրացել է բերքատվությունը, իսկ բամբակի մթերման պլանը 1933 թվականին կատարվել է 100,5 տոկոսով (առ 12-ը հունվարի 1934 թվականի)՝ 1932 թվականի 79,4 տոկոսի փոխարեն։

Այս ամենն անհրաժեշտ պայմաններ են ստեղծում 1934

թվականին ԱՍՖԽՀ-ում բամբակագործությունն ել ավելի ամրացնելու և նրա հետագա վորակական վերելքի համար։

1934 թվականի բամբակացանի գարնան կամպանիան պետք ե ընթանա բերքատվության և բամբակի արտադրանքի վորակի ել ավելի բարձրացման համար մղվող ծավալուն պայքարի նշանաբանով։

Դրանից յելնելով, Անդրժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդր-յերկոմը վորոշում են —

1. 1934 թվականի գարնան համար ԱՍՖԽՀ-ում բամբակի ցանքերի տարածությունը սահմանել 216.150 հեկտար, բաշխելով ըստ Հանրապետությունների ու հատվածների հետևյալ կերպ (հազ. հեկտարներով).—

| | Ընդամենը | Այդ թվից խորհտնտ, | Այդ թվում պայմանագր. հաշվածում | Դրանից ՄՏԿ-ների կողմից սպասարկվող կոլտնտեսութ. |
|---|---|---|---|---|
| . ՍԽՀ | 191,0 | 11,0 | 180,0 | 163,0 |
| ՀՍԽՀ | 18,0 | — | 18,0 | 12,5 |
| ՎՍԽՀ | 7,15 | 0,15 | 7,0 | 4,0 |
| ԱՍՖԽՀ | 216,15 | 11,15 | 205,0 | 179,5 |

Այդ թվում յեգիպտական բամբակ՝ Ադրբ. ԽՍՀ-ում—40 հազ. հեկտար, վորից խորհտնտեսություններում—9,500 և պայմանագրային հաշվածում—30.500 հեկտար։

2. ԱՍՖԽՀ-ի բամբակացան շրջաններում առվույտի ցանքի պլանը սահմանել 11,500 հեկտար. այդ թվում—Ադրբ. ԽՍՀ-ում 5.800 հեկտար, ՀՍԽՀ-ում—4 հազար հեկտար, ՎՍԽՀ-ում 1.700 հեկտար։

3. Առաջարկել հանրապետությունների ժողկոմխորհներին ու կենտկոմներին, Անդրհողժողկոմատին և հանրապետությունների Հողժողկոմատներին ու Տրակտորկենտրոններին՝ 10 որվա ընթացքում բամբակի ցանքի պլանները հասցնել շրջաններին, խորհտնտեսություններին, ՄՏ կայաններին, կոլտնտեսություններին, նաև կայուն առաջադրանքներ տալ կուլակային- ունեվոր տնտեսություններին։



Մինչև փետրվարի մեկն ավարտել բամբակի ցանքերի համար հողամասերն հատկացնելու և այդ հողամասերը բամբակի ցանքերին ամրացնելու գործի ստուգումը, ապահովելով բամբակի համար բարձրորակ հողամասեր հատկացնելը։

4. Գարնանը կատարվելիք պարարտացման պլանը սահմանել հետևյալ չափով (հեկտարներով).—

| | Հանքային պարարտանյութեր | Գոմաղբային պարարտանյութ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Ադրբ. ՍԽՀ . . . | 26100 | 10000 | 36100 |
| ՀՍԽՀ . . . . . | 5000 | — | 5000 |
| ՎՍԽՀ . . . . . | 2000 | 1000 | 3000 |
| ԱՍՖԽՀ . . | 33100 | 11000 | 44100 |

5. Բամբակի միջին բերքատվությունը յուրաքանչյուր հեկտարից ԱՍՖԽՀ հանրապետություններում 1934 թ. համար սահմանել — Ադրբեջանի ԽՍՀ-ում, 7,5 ցենտներ, ՀՍԽՀ-ում 6,7 ցենտներ, ՎՍԽՀ-ում 6 ցենտներ։ Առաջարկել Անդրհողժողկոմատին և հանրապետությունների Հողժողկոմատներին՝ 20 որվա ընթացքում դիֆերենցիացիայի յենթարկել բերքատվությունն ըստ շրջանների, հատկապես նշելով յեգիպտական բամբակի բերքատվության չափը։

ԱՍՖԽՀ-ի Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը առաջարկում են կիրառել հետևյալ ձեռնարկումները —

## ԱԳՐՈ-ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Առաջարկել հանրապետությունների Ժողկոմխորհներին ու Կենտկոմներին և Անդրհողժողկոմատին՝ պարտավորեցնելու հանրապետությունների Հողժողկոմատներին ու Տրակտորկենտրոններին—

ա) Մինչև գարնան կրկնավարը, սահմանել ձմռան արաթից դուրս յեկող հողամասերի պարտադիր փոցխում, իսկ մոլախոտերով աղբակալված հողամասերում բացի դրանից կատարել նաև փխրացում։ Պարտավորեցնել ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ սիստեմատիկաբար ստուգել և ապահովել աշնանավարի, արաթի, գարնանավարի ու ցանքի բարձր վորակը։

ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը և Անդրժողկոմխորհը հատկապես ընդգծում ու պահանջում են կրկնակի վար կատարել և ջրել այն հողամասը, ուր վերոհիշյալ աշխատանքները վատ են կատարված և չվարված տեղեր են թողնված։

բ) Բամբակի ցանքն սկսել ապրիլի 17—20-ից և հիմնականում ավարտել մինչև մայիսի 5-ը, առանձին շրջաններում ցանքը լրիվին ավարտելով մինչև մայիսի 10-ը. յեգիպտական բամբակի ցանքը ավարտել ամերիկյան տեսակների ցանքից 5 որ առաջ. ապահովել բամբակի ցանքը 100 տոկոսով շարքացան կատարելը։ Տրակտորային ցանք սահմանել — Ադրբ. ԽՍՀ-ում 40 հազար հեկտարի չափով, ՀՍԽՀ-ում 2 հազար հեկտարի և ՎՍԽՀ-ում՝ 2 հազար հեկտարի չափով։

գ) Տասն որվա ընթացքում կոլտնտեսություններին հասցնել մանրամասն պարտադիր ագրոկանոններ (սերմացուի նախապատրաստում, ցանքի նորմաներ, ցանքի խորություն, ցանքերի խնամք և այլն), հատկապես առանձնացնելով յեգիպտական տեսակները։ Ապահովել ագրոկանոնների մանրազնին մշակումն ու քննարկումը կոլտնտեսություններում և բրիգադներում։ Բամբակացան շրջաններում գյուղխորհուրդներին կից կազմակերպել ագրոկանոնների կիրառման վորակն ստուգող տեսչություններ՝ մեկ հոգուց կազմված, վորը պետք է առաջադրվի գյուղխորհրդի կազմից և հաստատվի շրջգործկոմի կողմից։



Բամբակացան շրջաններում բոլոր կոլտնտեսություններին կից կազմակերպել ագրո-խորհուրդներ, վորոնք ընտրվում են մեկ տարի ժամանակով, փորձված, հարվածային յեռանդուն կոլտնտեսականներից (իսկ վորտեղ հնարավոր է, խորհուրդների մեջ մտցնել նաև գյուղատնտեսին), պարտավորեցնելով նրանց հսկելու պարտադիր ագրոձեռնարկումների կազմակերպման ու կիրառման ճիշտ ընթացքի վրա։ Ագրոխորհուրդներն ընտրվում են կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներում՝ 3—5 հոգուց բաղկացած։

2. Առաջարկել Անդրհողժոկոմատին և ՌԲՎ-ի Անդրկովկասյան Բաժանմունքին՝ տասն որվա ընթացքում Անդրժողկոմխորհի քննությանը ներկայացնել 1934 թվականին բամբակի ցանքերի վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարելու ձեռնարկումների և աշխատանքի ծավալուն պլանը։

3. Առաջարկել հանրապետությունների Հողժողկոմատներին և Տրակտորկենտրոններին՝ ապահովել հանքային պարարտանյութերի անմիջապես բաշխումն ու փոխադրումը կոլտնտեսություններ (անցյալ տարվանից մնացած և նոր ստացվող)․ սահմանելով, վոր հանքային պարարտանյութերը կոլտնտեսություններում նախքան դաշտ փոխադրելը պետք է [illegible]յման խառնվեն։ Հանքային պարարտանյութերը [illegible] պահելու, դաշտ փոխադրելու և ճիշտ գործադրելու [illegible]անատվությունը դնել ՄՏԿ-ների դիրեկտորների վրա։ Մինչև 1934 թվականի փետրվարի մեկը բ[illegible] ՄՏ[illegible]ները կոմպլեկտավորել քիմիգատոր-գյուղատնտեսներով։

Առաջարկել Անդրհողժողկոմատին և հանրապետությունների Հողժողկոմատներին ու Տրակտորկենտրոններին՝ իրենց հատուկ հսկողության ու ստուգման տակ առնել պարարտացման վորակը։

4. Բացառիկ նշանակություն տալով ցանքաշրջանառությանը՝ բամբակի բերքատվությունը բարձրացնելու գործում, Անդրժողկոմխորհը և Համ-Կ-(Բ)Կ Անդրյերկոմն անձնապես պարտավորեցնում են հանրապետությունների Հողժողկոմներին՝ ընկ. ընկ. Վեզիրովին, Մասիկաշվիլուն յեվ Մամիկոնյանին՝ հատուկ ուշադրություն նվիրել բամբակացան կոլտնտեսություններում ցանքաշրջանառության կիրառելու հարցերին և ապահովել աշխատանքն Անդրժողկոմխորհի կողմից սահմանված ժամկետներին ավարտելը։ Կոլտնտեսություններում ցանքաշրջանառության կիրառելու ժամանակ հատուկ ուշադրություն նվիրել հողաշինարարական աշխատանքին։ Առաջարկել հանրապետությունների Ժողկոմխորհներին ու Կենտկոմներին և Անդրհողժողկոմատին՝ կազմակերպել ցանքաշրջանառության ուղղությամբ կատարվող աշխատանքների սիստեմատիկ ստուգումը։

5. Մինչև փետրվարի 5-ն ավարտել առվույտի սերմի փոխադրումն ու ներքին ռեսուրսների մոբիլիզացիան և նրա բաշխումը կոլտնտեսությունների միջև։

6. Առվույտի ցանքն ավարտել Ադրբ.ԽՍՀ-ում և ՎԽՍՀ-ում մինչև մարտի 25-ը, իսկ ՀԽՍՀ-ում մինչև ապրիլի 5-ը։

## ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Առաջարկել հանրապետությունների Ժողկոմխորհներին և Կենտկոմներին—

Մինչև փետրվարի մեկը ավարտել վոռոգման սիստեմի վերանորոգման ու մաքրման պլաններ կազմելը և քննությյան առնել այդ պլաններն արտադրական լայն խորհրդակցություններում ու կոլտնտեսականների ժողովներում։ Փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ն անցկացնել վոռոգման ցանցի մաքրման միամսյակ, այդ նույն ժամկետում ավարտելով ցանցի ու կառուցումների վերանորոգումը։

Մինչև մարտի 20-ն ավարտել ջրհանների ու քյահրիզների վերանորոգումը և լիակատար կերպով կարգի բերելը։ Առաջարկել Ադրբեջանի ԽՍՀ-ի Ժողկոմխորհին ու Ադրբ. Կ(բ)Կ Կենտկոմին՝ հատուկ հսկողության տակ առնել Քուռ գետի ջրհանների վերանորոգման ու նախապատրաստման ընթացքը։

2. Առաջարկել Անդրհողժողկոմատին՝ հանրապետությունների Հողժողկոմատների և Անդրկ. Բամբակագ. Գիտահետազոտական Ինստիտուտի ու Անդրկ. Ջրային Տնտ. փորձա—հետախուզ. Ինստիտուտի հետ միասին, վոչ ուշ քան մինչև փետրվարի մեկը, ճշտել բամբակի ցանքերը ջրելու նորմաներն ու ժամկետները՝ ըստ առանձին շրջանների, հասցնել այդ նորմաներն ու ժամկետները շրջաններին, կոլտնտեսություններին ու անհատական տնտեսություններին և մինչև մարտի մեկն ավարտել ջրից օգտվելու ու ջրելու պլանների մշակումը՝ ըստ շրջանների, ապահովելով ծանծաղ ու չափազանց ծանծաղ վոռոգման ցանցի վերակառուցման գործը ժամանակին կատարելն ու նրա բարձր վորակը։

ԱՍՖԽՀ-ի Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը պարտավորեցնում են հանրապետությունների Ջրտնտեսություններին՝ բամբակի ու առվույտի ցանքերը ամպայման և առաջին հերթին լիակատար չափով ջրով ապահովելու հետ միաժամանակ ապահովել նաև մյուս կուլտուրաներին ջուր տալը։

3. Առաջարկել Անդրհողժողկոմատին, հանրապետությունների Հողժողկոմատներին, Ադրբեջանի Բամբակա-

գործական Տրակտորկենտրոնին և Հայաստանի ու Վրաստանի Ջրտնտեսություններին՝ մինչև մարտի 15-ը կազմակերպել ջրատնտեսային ստորին աշխատողների պատրաստման ու վերապատրաստման դասընթացներ՝ բառացիկ ուշադրություն նվիրելով հիմնական ստորին ողակի—ջրվորների, բրիգադիրների և ջրոգտագործման վարիչների—ընտրության ու պատրաստման գործին։

## ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍԵՐՄԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Առաջարկել Անդրհողժողկոմատին՝ մինչև փետրվարի մեկը՝ հանրապետությունների Հողժողկոմատների հետ միասին, քննության առնել ու հաստատել 1934 թվականին բամբակի սերմերի բաշխման պլանն ըստ շրջանների, մթերման կետերի ու խորհտնտեսությունների՝ բամբակի շրջանացման վերաբերյալ ընդունված պլանի համապատասխան։

2. Առաջարկել Անդրհողժողկոմատին՝ հանրապետությունների Հողժողկոմատների ու Տրակտորկենտրոնների հետ միասին վոչ ուշ, քան մինչև մարտի մեկը սահմանել բամբակացան սերմնաբուծական կոլտնտեսությունների 1934 թվականի ցանքն ըստ շրջանների և միջոցառումներ մշակել կոլտնտեսություններում սերմնաբուծական զարգացումն ապահովելու ուղղությամբ, համապատասխան ՄՏ-կայանները կոմպլեկտավորել սերմնաբույծ գյուղատնտեսներով։

3. Նշելով բամբակազտիչ գործարանների աշխատանքում յեղած անթույլատրելի փաստերը՝ բամբակի սերմերը մաքրելու և պաշտպանելու ասպարեզում, Անդրժողկոմխորհը և Համկ(բ)կ Անդրյերկոմը պահանջում են հանրապետությունների Ժողկոմխորհներից ու Կենտկոմներից, Անդրժողկոմխորհին կից Մթերումների Կոմիտեյից և Անդրհողժողկոմատից՝ ամենախիստ ու վճռական միջոցներ ձեռք առնել՝ չթույլատրելով ինչպես ամերիկյան, այնպես և յեգիպտական



բամբակի զանազան բոտանիկական տեսակների զտված սերմերի միմյանց հետ խառնելը և ապահովել դրանց ճիշտ պահպանումը։ Սերմացույի զտումն ավարտել վոչ ուշ քան մինչև հունվարի 25-ը։ Ցանվելիք սերմացույի վորակական ստուգումն ու գնահատումն ավարտել փետրվարի 5-ին, իսկ կրկնակի մաքրումը (լինտեր մեքենայով) փետրվարի տասին։

Վոչ ուշ քան մինչև մարտի 5-ն ապահովել սերմերի փոխադրումը մթերման կետերը՝ բամբակագործներին բաժանելու համար։

## ՅԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՄԲԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկել Ադրբեջանի Ժողկոմխորհին և ԱդրԿ(բ)Կ Կենտկոմին—

ա) Պարտավորեցնելու Հողժողկոմատին ու Տրակտորկենտրոնին, տասն որվա ընթացքում ճշտել յեգիպտական բամբակի շրջանացման պլանը՝ 1934 թվականի համար ընդունված ցանքերի տարածության պլանի հիման վրա։

բ) Նկատի ունենալով յեգիպտական բամբակի ցանքերի տարածության ընդարձակումը և յեգիպտական բամբակի ցանքերի յուրացումը նոր կոլտնտեսությունների կողմից, պարտավորեցնել Ադրբեջանի Հողժողկոմատին և Ադրբեջանի Բամբակագործական Տրակտորկենտրոնին կազմակերպել յեգիպտական բամբակի մասնագետ գյուղատնտեսների ու ագրոտեխնիկների վերապատրաստման կարճատև դասընթացներ։

գ) Պարտավորեցնել Ադրբեջանի Հողժողկոմատին՝ մինչև փետրվարի մեկը սահմանել յեգիպտական բամբակի կուլտուրայի պարտադիր ագրոկանոններ՝ ըստ շրջանների, հաշվի առնելով յուրաքանչյուր շրջանի առանձնահատկությունները և ապահովել այդ ագրոկանոնների լայն քննարկումը կոլտնտեսություններում ու ՄՏ-կայաններում։

Առաջարկել Ադրբեջանի ժողկոմխորհին և ԱդրբԿ(բ)Կ Կենտկոմին՝ պարտավորեցնելու Ադրբեջանի բամբակագործական խորհտնտեսությունների վարչությանը (Ազսովխոզխլոպոկ), մասսայական աշխատանք ծավալել բանվորների հավաքագրման ու կոլտնտեսությունների հետ պայմանագրեր կնքելու ուղղությամբ, ճշտորեն սահմանելով աշխատանքի ու աշխատանքի վարձատրման ժամկետները, ձեռնարկումներ մշակել ու կիրառել՝ խորհտնտեսության բանվորների մշտական կադրեր ստեղծելու և նրանց խորհտնտեսություններին ամրացնելու ուղղությամբ. բարելավել բանվորների բնակարանային պայմաններն ու կուլտուր-կենցաղային սպասարկումը, բոլոր անհրաժեշտ միջոցառումները կիրառել մալարյայի դեմ պայքարելու և խորհտնտեսությունների բանվորների ու ծառայողների առողջապահական սպասարկումը բարելավելու համար, ամեն կերպ արագացնելով բնակարանային-կենցաղային շինարարությունը։

Առաջարկել Անդրժողկոմխորհին կից Մթերումների Կոմիտեյին՝ Անդրհողժողկոմատի հետ միասին՝ ոչ ուշ քան մինչև փետրվարի 5-ն Անդրժողկոմխորհի հաստատությանը ներկայացնել բամբակի կոնտրակտացման և տիպային պայմանագրերի վերաբերյալ որոշման նախագիծը։

ԱՍՖԽՀ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը պահանջում են բոլոր խորհրդային, կուսակցական ու հողային մարմիններից և ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների քաղբաժիններից՝ ժամանակին կիրառել բոլոր միջոցառումները, բամբակի ցանքի 1934 թվականի պլանը հաջողությամբ կատարելու համար։ Տեղերում լայնորեն ծավալել մասսայական-բացատրական քաղաքական աշխատանք. կոլտնտեսականների, աշխատավոր մենատնտեսների և ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների բանվորների մասսաներին մոբիլիզացիայի ենթարկել բամբակի գարնան ցանքի խնդիրների շուրջը, վճռականորեն հարվածելով հանգստացուցիչ տրամադրությունները և աշխատանքն ինքնահոսի մատնելու յերևույթները, ե՛լ ավելի բարձրացնելով դասակարգային զգաստությունը՝ կուլակի և նրա գործակալության քայքայիչ աշխատանքի հանդեպ. բոլշևիկյան վերահսկողության տակ առնել ցանքի նախապատրաստման ու կատարման բոլոր ձեռնարկումների կիրառումը (մինչև ցանքն սկսելը կատարվող աշխատանքները, ՄՏԿ-ների նախապատրաստումը, տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների վերանորոգումը, քաշող ուժի ու կադրերի նախապատրաստումը, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների կազմակերպչական—արտադրական պլանները կազմելը և այլն)։

Անդրժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը պահանջում են անպայման կատարել բամբակի ցանքի պլանը՝ պահպանելով նրա բարձր որակը և ցանքի աշխատանքը վերջացնելուց հետո, անմիջապես բոլոր ուժերը փոխադրել մշակման-քաղհանի ասպարեզը, դրանով իսկ ապահովելով բամբակի դաշտերի բերքատվության բարձրացումն ու բամբակի արտադրանքի որակի բարելավումը։

ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի նախագահ՝

Գ. ՄՈՒՍԱԲԵԿՈՎ

ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմի քարտուղար՝ Լ. ԲԵՐԻԱ

## ԱՍՖԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ ԿԻՐԱՌՎԵԼԻՔ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը նշում են, որ 1933 թվականին անասնապահության զարգացման և ամրացման ուղղու-

թյամբ կիրառված ձեռնարկումների հետևանքով, ԱՍՖԽ հանրապետությունները վորոշ հաջողություններ են ձեռք բերել սոցիալիստական անասնապահության աճման ասպարեզում (կոլտնտեսային ապրանքային ֆերմաների կոմպլեկտավորման պլանի գերակատարում, խոտհնձի կամպանիայի բավարար անցկացում, անասունների ձմեռելու ուղղությամբ միջոցառումների կիրառում և այլն):

Սակայն Անդրժողկոմխորհը և Համ Կ(բ)Կ Անդրյերկոմը արձանագրում են, վոր մի շարք կենտրոնական կազմակերպություններ, նաև կուսշրջկոմներ, շրջգործկոմներ, անասնաբուծական տրեստների, անասնաբուծական խորհտնտեսությունների և ՄՏԿ-ների դիրեկտորներ, հողբաժիններ, կոլտնտեսային ֆերմաների միավորումներ և առանձին կոլտնտեսությունների վարչություններ դեռևս շարունակում են թերագնահատել անասնապահության զարգացման ու ամրացման խնդիրները:

Սոցիալիստական անասնապահության հետագա արագ աճման ու ամրացման, նրա վորակական ցուցանիշների բարձրացման, խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում անասունների ձմեռելու գործն օրինակելի ձևով կազմակերպելու, անասունների գարնանային ծինը և ձիերի ծինը վորակապես բարձր անցկացնելը նախապատրաստելու և 1934 թվականի գարնան աճի լիակատար պահպանումն ապահովելու նպատակով, ԱՍՖԽՀ ժողկոմխորհը և ՀամԿ (բ)Կ Անդրյերկոմը պարտավորեցնում են հանրապետությունների ժողկոմխորհներին ու Կենտկոմներին Անդրհողժողկոմատին և Խորհտնտժողկոմատի Անդրկովկասյան Լիազորությանը՝ ապահովել հետևյալ ձեռնարկումների կիրառումը.—



## 1. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՁՄԵՌԵԼՈՒ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Տասն օրվա ընթացքում ավարտել խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների կողմից խորհտնտեսությունների, ապրանքային ֆերմաների և կոլտնտեսությունների համայնացված հոտերի անասունների տարեկան պահանջը լիակատար կերպով բավարարելու սահմաններում կեր առանձնացնելու գործի ստուգումը և ստուգել գարնան դաշտային աշխատանքների ընթացքում բանող անասունների համար անհրաժեշտ անձեռնմխելի ֆոնդերի առանձնացումը:

Առաջարկել շրջհողբաժինների վարիչներին, ՄՏԿ-ների ու անասնապահական խորհտնտեսությունների դիրեկտորներին ու քաղբաժնի պետերին՝ ապահովել առանձնացված կերի ֆոնդերը ֆերմաների վարիչներին ու բրիգադիրներին հանձնելը՝ անպայման համապատասխան ակտ կազմելու միջոցով. ապահովել կերի ժամանակին փոխադրումը ձմեռելու կետերը, նրանց հարկ յեղած պահպանումն ու ռացիոնալ օգտագործումը:

## 2 ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ, ԽՈԶԵՐԻ ՈՒ ՁԻԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԾԻՆՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա). Հատուկ հսկողության տակ առնել 1934 թվականի մատղաշ անասունների պահպանումը՝ բարձրացնելով կուսակցության շրջկոմների քարտուղարների, շրջգործկոմների նախագահների, հողային մարմինների ղեկավարների, խորհտնտեսությունների դիրեկտորների և կոլտնտեսությունների նախագահների պատասխանատվությունը՝ մատղաշ անասունների պահպանման համար, ամենախիստ պատասխանատվության յենթարկելով մատղաշ անասունների սատկելու համար անձնապես հանցավորներին:

Անդրժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը հատկապես ընդգծում են, վոր անփույթ վերաբերմունքը մատղաշ

անասունների խնամքի ու պահպանման նկատմամբ, կդիտվի որպես անասունների վերարտադրման ասպարեզում կուսակցության ու կառավարության կարևորագույն ձեռնարկումների վիժեցում։

բ) 1934 թվականին անասունների ծինը կազմակերպելու համար, յուրաքանչյուր կոլտնտեսային ապրանքային ֆերմայի և խորհտնտեսության կից պատրաստել կահավորված ծննդաբերական շենքեր, տաքացնելով ու ախտահանելով այն, ծննդաբերական բաժիններում առանձնացնելով՝ կահավորված տարածություն հորթերի համար, ծննդաբերական բաժիններն ապահովելով լավորակ փռվածքով՝ ինչպես մայրերի, այնպես և հորթերի համար։

գ) Հատուկ խնամք սահմանել մայր անասունների նկատմամբ, ծնելու ժամանակը մոտեցած մայր անասուններին առանձնացնելով և ապահովելով նրանց հատուկ խնամքն ու կերակրումը։ Հղի զամբիկներին ազատել ծանր աշխատանքներից, իսկ ծնելուց մեկ ամիս առաջ բոլորովին ազատել նրանց աշխատանքից։

դ) Բոլոր անասունների գոմերն ապահովել ախտահանման միջոցներով, անասնաբույժ սանիտարներով, ծննդաբերության շենքերում սահմանելով նրանց գիշերային հերթապահություն։

յե) Ապահովել անասնապահական բրիգադների կողմից կատարվող բոլոր տեսակի աշխատանքները գործարքային սիստեմով վարձատրելը՝ ստացված աճի քանակության և անասունների պահպանմանը համապատասխան։

### 3. ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Ոչ ուշ, քան մինչև 1934 թվականի փետրվարի 5-ը մշակել և տեղերն ուղարկել խոշոր յեղջյուրավոր անասունների, խոզերի ու ձիերի բեղմնավորման կամպանիայի պլանները։ Բեղմնավորման կետերի տեղավորումն



ու յուրաքանչյուր բեղմնավորման կետին տրվող առաջադրանքները սահմանել ըստ կոլտնտեսությունների ու գյուղխորհուրդների —«տասնյակներ» և «քսանյակներ»— ապահովելով բեղմնավորման պլանների լայն մշակումն ու քննարկումը կոլտնտեսականների, խորհտնտեսության բանվորների ու աշխատավոր մենատնտեսների կողմից։

բ) Պարտավորեցնել շրջգործկոմի նախագահներին և խորհտնտեսությունների դիրեկտորներին՝ իրենց անձնական պատասխանատվությամբ, մինչև փետրվարի 10-ը ստուգել առաջիկա բեղմնավորման կամպանիայի ապահովվածությունն արտադրողներով և մի շարք կոնկրետ միջոցառումներով ապահովել արտադրողների վողջ պահանջի բավարարումը։

Պարտավորեցնել բոլոր կոլտնտեսություններին, նաև գյուղխորհուրդներին՝ կազմակերպել հասարակական արտադրողներ ձեռք բերելու գործը, օգտագործելով նրանց կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների անհատական օգտագործման տակ գտնվող անասունների համար։ Առաջարկել խորհտնտեսություններին՝ արտադրողներ առանձնացնել իրենց յենթակա շրջաններում՝ կոլտնտեսությունների ու աշխատավոր մենատնտեսների անասուններին սպասարկելու համար։

գ) Ձիաբուծության ասպարեզում ապահովել բեղմնավորման կամպանիան գյուղացիական հատվածում, կազմակերպելով անհրաժեշտ թվով բեղմնավորման կետեր՝ օգտագործելով Պետ. ձիաբուծարանի «հավանությունն ստացած» ու օգտագործման համար ժամանակավորապես թույլատրված արտադրող հովատակներին։

Հատուկ կերպով արգելել բեղմնավորման կամպանիայի վողջ ժամանակամիջոցում, առանձնացված արտադրողներին աշխատեցնելու նպատակով օգտագործելը, պարտավորեցնել հանրապետական ձիաբուծական վարչու-

թյուններին՝ միջոցներ ձեռք առնել բեղմնավորման կետերի բոլոր արտադրող հովատակներին բեղմնավորման կամպանիայի շրջանում անհրաժեշտ քանակությամբ կերով ապահովելու ուղղությամբ։

դ) Յուրաքանչյուր կոլտնտեսությունում ու գյուղխորհրդում առանձնացնել հատուկ մարդիկ, վորոնք անձնապես պատասխանատու յեն լինելու գարնան բեղմնավորման կամպանիան անցկացնելու, ինչպես և նրա հաշվառման համար։

Շրջաններում բեղմնավորման կամպանիայի ընդհանուր ղեկավարությունն ու պատասխանատվությունը դնել անձնապես շրջգործկոմի նախագահների, հողբաժնի վարիչների և խորհտնտեսության դիրեկտորների վրա։

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՎՈՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

ա) 1934 թվականին կազմակերպել ազնվացեղ անասուններ տարածող կետեր. մեկ կետ՝ Վրաստանի ԽՍՀ-ի Թուշի տեսակի վոչխարների, մեկական կետ՝ Ադրբեջանի ԽՍՀ-ի և ՀՍԽՀ-ի «բալբաս» տեսակի վոչխարների և մեկ կետ՝ Վրաստանի ԽՍՀ-ի մինգրելական այծերի։

Առաջարկել Անդրհողժողկոմատին՝ հանրապետությունների Հողժողկոմատների հետ միասին՝ քսան օրվա ընթացքում մշակել ազնվացեղ անասունների տարածման կետերի կազմակերպման կարգը և ներկայացնել այն Անդրժողկոմխորհի հաստատությանը։

Առաջարկել Խորհտնտժողկոմատի ԱՍՖԽՀ լիազորությանը՝ 1934 թվականի պլաններում նախատեսնել Բաշկիչեթի, Լիասգորի (խոշոր յեղջերավոր անասուններ), Մինգեչաուրի (վոչխարաբուծական) և Թելավի (խոզաբուծական) խորհտնտեսությունների փոխադրումն ազնվացեղ անասուններ արտադրող խորհտնտեսությունների (բացի



վորպես ազնվացեղ անասունների խորհտնտեսություն գոյություն ունեցող Լոռու խորհտնտեսությունից)։

բ) 1934 թվականին կազմակերպել 130 զոոկետեր, այդ թվում Ադրբեջանի ԽՍՀ-ում՝ 52, ՀՍԽՀ-ում՝ 26 և ՎՍԽՀ-ում՝ 52։ Առաջարկել Անդրհողժողկոմատին՝ 20 օրվա ընթացքում հանրապետական Հողժողկոմատների հետ միասին առանձնացնել այն շրջանները, ուր առաջին հերթին պետք է կազմակերպվեն զոոկետեր և մշակել նրանց կազմակերպման կարգը։

գ) 1934 թվականի ընթացքում ազնվացեղ անասունների ֆերմաների թիվը հասցնել՝ խոշոր յեղջերավոր անասուններինը՝ Ադրբեջանի ԽՍՀ-ում՝ 8-ի, վորից 5-ը Շվից տեսակի և 3-ը՝ Ղազախի անասունների. Վրաստանի ԽՍՀ-ում՝ 13 ֆերմա, վորից 8-ը Շվից տեսակի և 5-ը Վրաստանի լեռնային անասունների (խեվսուրական) և ՀՍԽՀ-ում՝ 10 ֆերմա, վորից 7-ը Շվից և 3-ը Ղազախի տեսակի անասունների։

Վոչխարաբուծական ֆերմաներ. Ադրբեջանի ԽՍՀ-ում 12, վորից 2-ը բալբաս տեսակի վոչխարների, 3-ը Թուշի, 3-ը կարակուլ և 4-ը մերինոս տեսակի վոչխարների։ ՀՍԽՀ-ում՝ 10 ֆերմա բալբաս վոչխարների և յերեք ֆերմա կարակուլ տեսակի վոչխարների, ՎՍԽՀ-ում՝ 10 ֆերմա Թուշի տեսակի վոչխարների։

Խոզաբուծական ֆերմաների գծով՝ Ադրբեջանի ԽՍՀ-ում յերեք ֆերմա՝ սպիտակ անգլիական տեսակների, ՀՍԽՀ-ում 2 ֆերմա՝ սպիտակ անգլիական տեսակների և ՎՍԽՀ-ում՝ 5 ֆերմա՝ սպիտակ անգլիական տեսակի։

դ) Ազնվացեղ անասունների ֆերմաներ կազմակերպելու և անասունների վորակական բարելավումն ապահովելու կապակցությամբ համաձայն Անդրհողժողկոմատի ըստ ցեղերի կատարած շրջանացման, հանրապետությունների Հողժողկոմատների հետ համաձայնեցնելով մինչև փետր-

վարի 5-ը սահմանել ազնվացեղ անասունների ներմուծման պլանը։

յե) Բոլոր կուսակցական ու խորհրդային մարմինների առաջ, վորպես կենտրոնական խնդիր դնել վորակական ցուցանիշների բարձրացումը, լայնորեն ոգտագործելով անասուններին սպասարկող բանվորների և կոլտնտեսականների նատուրային ու դրամական պարգևատրումները՝ խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում մատղաշ անասունների պահպանման ու արտադրանքի ասպարեզում լավագույն ցուցանիշներ ձեռք բերելու համար։

5. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՆՐ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Ուժեղացնել ոպերատիվ ղեկավարությունը ինկուբատորային թռչնաբուծական կայանների նկատմամբ, վերածելով նրանց կոլտնտեսային թռչնաբուծության ու աշխատավոր անհատական տնտեսությունների թռչնաբուծության իսկական կազմակերպիչների ու ղեկավարների՝ իրենց կողմից սպասարկվող շրջաններում։

բ) ԱՍՖԽՀ-ում 34 թվականի համար սահմանել ինկուբատորային թռչնաբուծության կայանների հետյալ ցանցը

Ադրբեջանի ԽՍՀ-ում—Աստրախան—Բազարի Շամխորի Դիվիչինի, Կուբինի։

ՀՍԽՀ-ում՝ Լենինականի։

ՎՍԽՀ-ում՝ Գուրջաանի, Զուգդիդի և Սամտրեդի։

Առաջարկել Անդրհողժողկոմատին՝ Հանրապետությունների Հողժողկոմատների հետ համաձայնեցնելով՝ մինչև փետրվարի մեկը յուրաքանչյուր ինկուբատորային թռչնաբուծական կայանի համար սահմանել ձվեր դնելու և ճտեր հանելու պլանները։

գ) Հատուկ ուշադրություն նվիրել կոլտնտեսականների և աշխատավոր—մենատնտեսների մեջ մերձտնտեսային թռչնաբուծությունը, ճագարաբուծությունն ու մեղվաբու-



ծությունը զարգացնելուն՝ նրանց ազնվացեղ արտադրողներ բաժանելու, մասսայական բացատրական աշխատանք կատարելու և խրախուսական միջոցառումներ կիրառելու միջոցով։

Անդրժողկոմխորհը և Համ Կ(բ)Կ Անդրյերկոմը պահանջում են կուսակցության շրջկոմների քարտուղարներից ու շրջգործկոմի նախագահներից, հատկապես Բողդանովի, Ախալքալակի, Բաշկիչեթի, Ծալկայի, Դուշեթի, Հարավ—Ոսեթիայի, Ստեփանավանի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Նոր-Բայազետի, Աղբաբայի, Գետաբեկի, Քալբաջարի ու Կուբայի շրջաններից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզից և այլն, հատուկ ուշադրություն նվիրել կոլտնտեսություններում, առանձին կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների տնտեսություններում մեղվաբուծությունը զարգացնելուն, ապահովելով նրանց լայն ոգնություն ցույց տալը և խրախուսական միջոցառումների ծավալումը։

6. ԿԵՐԻ ԲԱԶԱՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Պարտավորեցնել հանրապետությունների Հողժողկոմատներին, խորհտնտժողկոմատի Լիազորության տրեստներին և շրջհողբաժիններին ապահովել կերի կուլտուրաների ցանքի պլանի լրիվին կատարումը, վոչ մի դեպքում չթույլատրելով ճեղքվածքներ, վորոնք տեղի ունեցան նախորդ տարիներում։

բ) Առաջարկել Անդրհողժողկոմատին և Խորհտնտժողկոմատի Անդրկովկասյան Լիազորությանը՝ մինչև փետրվարի 10-ը Անդրժողկոմխորհի քննությանը ներկայացնել 1934 թվականի խոտհնձի ու սիլոսացման պլանը։ Հաշվի առնելով արոտատեղերի՝ հատկապես ամառային արոտատեղերի գերակշիռ դերը Անդրկովկասի կերի բազայի ասպարեզում, առաջարկել Անդրհողժողկոմատին և հանրապետությունների Հողժողկոմատներին՝

ա) մինչև 1934 թվականի փետրվարի 15-ը ավարտել ամառային արոտատեղերի բաշխումը կոլտնտեսությունների, ֆերմաների ու գյուղխորհուրդների միջև և նրանց յերկարատև ամրացումը վերջիններիս։

բ) 1934 թվականի պլաններում ու նախահաշիվներում նախատեսել մելիորատիվ աշխատանքներ՝ մարգագետիններն արմատապես բարելավելու, արոտատեղային ճիշտ տնտեսություն կազմակերպելու և անասունների համար դեպի արոտավայրերը տանող ճանապարհներ պատրաստելու ուղղությամբ։

գ) Մշակել և մինչև յուրաքանչյուր ոգտագործողին (կոլտնտեսության, գյուղխորհրդի) հասցնել նրանց ամրացված մարգագետիններն ու արոտատեղերը բարելավելու վերաբերյալ պարտադիր կանոններ, մտցնելով այդ կանոնները պայմանագրերի մեջ և սահմանելով իսկական վերահսկողություն և պատասխանատվություն նրանց կիրառման համար։

դ) 1934 թվականի պլաններում նախատեսել արոտավայրերի վերածումը, մարգագետինների՝ հնձելու համար։

ե) Առաջարկել Խորհտնտժողկոմատի Լիազորության սիստեմի խորհտնտեսություններին՝ 1934 թվին ավարտել արոտատեղային շինարարությունը և միջոցառումներ կիրառել խոտհնձի տարածությունները բարելավելու ուղղությամբ։

7. Պարտավորեցնել Անդրհողժողկոմատին, հանրապետությունների Հողժողկոմատներին, Խորհտնտժողկոմատի Անդրկովկասյան Լիազորությանն ու շրջգործկոմներին, պարտադիր անասնաբուժական սանիտարական կանոններ սահմանել անասունների գոմերը պահպանելու, ախտահանում կատարելու և այլնի վերաբերյալ՝ հատուկ ուշադրու-



թյուն նվիրելով զանազան վարակիչ հիվանդություններ կանխելու միջոցառումներին։

Անդրժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմը կուսակցության շրջկոմների քարտուղարների ու շրջգործկոմների նախագահների հատուկ ուշադրությունն են հրավիրում անասնաբուժական աշխատանքների դրվածքի նկատմամբ սիստեմատիկ ու կոնկրետ ղեկավարություն ունենալու անհրաժեշտության վրա՝ աշխատանքի այդ բնագավառը վերցնելով իրենց անմիջական հսկողության տակ։

8. Զոոանասնաբուժական անձնակազմի հոսունությունը վերացնելու և այդ կադրերը խորհտնտեսություններին ու շրջաններին ամրացնելու նպատակով, առաջարկել հանրապետությունների Ժողկոմխորհներին և Կենտկոմներին՝ միջոցներ ձեռք առնել զոոտեխնիկների, կերի մասնագետների և անասնաբուժների նյութական-կենցաղային և կուլտուրական պայմաններն իսկապես բարելավելու ուղղությամբ, ապահովելով նրանց բնակարանային պայմաններով, կոմունալ սպասարկմամբ, մատակարարելով նրանց շրջանի նոմենկլատուրային աշխատողներին համահավասար։

9. Առաջարկել Անդրհողժողկոմատին և հանրապետությունների Հողժողկոմատներին 1934 թվականին անասնապահության զարգացման վերաբերյալ ձեռնարկումների կիրառման ժամանակ հաշվի առնել անհատական հատվածում անասնապահության կազմակերպման ու սպասարկման ուղղությամբ կիրառվող միջոցառումների նկատմամբ անցյալում տեղի ունեցած թերագնահատման յերևույթները, 1934 թվականին ապահովելով կոնկրետ ղեկավարությունն ու ոգնությունը կոլտնտեսականների անհատական ոգտագործման գտնվող անասունների և աշխատավոր միանձնատնտեսների անասունների հետագա աճման գործում։

10. Առաջարկել Անդրհողժողկոմատին՝ մինչև 1934

թվականի փետրվարի 5-ը Անդրժողկոմխորհին ներկայացնել հանրապետությունների Հողժողկոմատների հետ միասին մշակված կոլտնտեսային անասնաբուծական ապրանքային ֆերմաների (որոնք տոմարագրված են առ 1934 թ. հունվարի 1-ը) անասունների կոմպլեկտավորման պլանն առ մեկն հունվարի 1935 թվականի՝ ի. հաշիվ սեփական վերարտադրության։

11. Անդրկովկասի կոլտնտեսականների միջից կովազրկությունը վերացնելու ձեռնարկումների հետագա ծավալման նպատակով, 1933 թվականի օրինակով սահմանել հորթերի կոնտրակտացում և գնում՝ անհատապես օգտագործելու կովեր չունեցող կոլտնտեսականների համար։

Առաջարկել Անդրհողժողկոմատին՝ մինչև մայիսի 1-ը Անդրժողկոմխորհին ներկայացնել կոնտրակտացման և անհատական օգտագործման համար կովեր չունեցող կոլտնտեսականների համար հորթեր ձեռք բերելու պլանը։

12. 1934 թվականի յայլաղային կամպանիայի հաջող անցկացումն ապահովելու և անասուններին ձմեռային արոտատեղերից ամառային արոտատեղերն և ընդհակառակը՝ ամառային արոտատեղերից ձմեռային արոտատեղեր քշելու գործը ճիշտ կազմակերպելու, նաև բամբակագործական շրջանների աշխատավոր ազգաբնակչության մասսայական կերպով սար բարձրանալը կանխելու նպատակով, առաջարկել Անդրհողժողկոմատին, ձեռնարկումներ մշակել 1934 թվականի յայլաղային կամպանիան կազմակերպելու վերաբերյալ և ոչ ուշ, քան մինչև փետրվարի 10-ը ներկայացնել Անդրժողկոմխորհի հաստատությանը։

13. Նշելով հաշվառման ու հաշվետվության գործի միանգամայն անբավարար դրվածքը 1933 թվականի հիմնական անասնաբուծական կամպանիաների ժամանակ (ծնի, բեղմնավորման կամպանիա և այլն), առաջարկել Անդրհողժողկոմատին ու հանրապետությունների Հողժողկոմատներին,



Խորհտնտժողկոմատի Անդրկովկասյան Լիազորությանը և Ժողտնտհաշվ-վարչությանը՝ 1934 թվականին ապահովել հաշվառման դրվածքի որակը անասնաբուծության ասպարեզում։

Անդրժողկոմխորհը և ՀամԿ (բ) Կ Անդրյերկոմը բոլոր կուսակցական, խորհրդային ու կոմյերիտական կազմակերպությունների ուշադրությունն են հրավիրում ընթացիկ տարում անասնապահության բնագավառում օրինակելի ու հարվածային աշխատանք կատարելու անհրաժեշտության վրա, այդ բնագավառում գոյություն ունեցող թերությունները վճռականորեն վերացնելու համար բարձրացնելով խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների ու շրջանային աշխատողների պատասխանատվությունը, անասնապահության ասպարեզում տրված առաջադրանքների կատարման որակի համար, նույն չափով ինչպես ցանքի և գյուղատնտեսական այլ հիմնական կամպանիաների կատարման համար։

Խորհտնտեսությունների բանվորների, կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների մասսաներին լայնորեն մոբիլիզացիայի յենթարկելով սոցիալիստական անասնապահության հետագա և էլ ավելի արագ աճման խնդիրների շուրջը կազմակերպելով լավագույն խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, ֆերմաների ու բրիգադների օրինակելի աշխատանքի ցուցադրում, ջախջախելով կուլակային սաբոտաժի յուրաքանչյուր ատահայտություն-կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները պետք է ապահովեն 1934 թվականին անասնապահության ասպարեզում կիրառվելիք միջոցառումների որակական ու քանակական բոլոր ցուցանիշների անպայման կատարումը։

Անդրժողկոմխորհի նախագահ՝

МОՒՍԱԲԵԿՈՎ

ՀամԿ (բ) Կ Անդրյերկոմի քարտուղար՝

Լ. ԲԵՐԻԱ

# ԱՍՖԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ 1934 ԹՎԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

Յելնելով «բոժոժի մթերման 1934 թ. պլանի վերաբերյալ» Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի 1933 թ. դեկտեմբերի 17-ի վորոշումից, Անդրժողկոմխորհը և Համ. Կ(բ)Կ Անդրյերկոմը վորոշում են.

1. Գրենան բաշխելու, բոժոժների մթերման պլանը և արթնացրած մի տուփ գրենայից ստացվելիք խոնավ բոժոժի միջին քանակը 1934 թ. համար հաստատել հետևյալ չափով.

| | Բաշխվելիք գրենայի քանակը (տուփերով) | Մի տուփ գրենայից ստացվելիք բոժոժի միջին քանակը (կել | Խոնավ բոժոժի ընդհանուր քանակը (տոններով) |
|---|---|---|---|
| Ադրբեջ. ՍԽՀ. . . . | 70,500 | 25, 5 | 1,800 |
| Հայաստ. ՍԽՀ. . . . | 23,00 | 43, 8 | 100 |
| Վրաստանի ՍԽՀ . . . | 88,000 | 31, 8 | 2,800 |
| ԱՍՖԽՀ . . . . | 160,800 | 29, 2 | 4,700 |

2. 1934 թ. համար թթենու տնկարաններ գցելու պլանը հաստատել հետևյալ չափով։

| | Բարձրաբուն թթենի | Թփային պլանտացիաների նորոգումը (հեկտարով | Թթենու սերմի ցանք (հեկտար-(ներով) | Տնկարա (հեկտարներով |
|---|---|---|---|---|
| | հատ | | | |
| ԱՍԽՀ | 100,000 | 500 | 10 | 25 |
| ՀՍԽՀ | 100,000 | 50 | — | 3 |
| ՎՍԽՀ | 700,000 | — | 4 | 15 |
| ԱՍՖԽՀ | 900,000 | 550 | 14 | 43 |



3. Առաջարկել հանրապետությունների Կենտկոմներին ու Ժողկոմխորհներին և Անդրհողժողկոմատին՝ ապահովել մի տասնօրյակի ընթացքում շերամապահության պլանային առաջադրությունները շրջաններին, կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին, աշխատավոր մենատնտեսներին հասցնելը, կայուն առաջադրություններ տալ կուլակային-ունևոր տնտեսություններին, տեղերում կազմակերպելով պլանների լայն քննարկումը։

Բոժոժների կոնտրակտացման ժամկետ սահմանել հունվարի 25—ից մինչև մարտի 20—ը։

4. Առաջարկել Անդրհողժողկոմատին, հանրապետությունների Հողժողկոմատներին, մետաքսարեստներին.

ա. Ապահովել ձմեռը գրենան լավ պահելու գործը Նավթլուղի և Բաղվի սառցարաններում, նրա լավ պահպանումը շրջանային շերամապահական մարմիններին կից և ոպերատիվ բազաներում՝ գրենան դուրս բերելու մոմենտից մինչև շերամապահներին բաժանելը։

բ. Մեկ տասնօրյակի ընթացքում ստուգել գրենայի պետական տեսչությունների և զոնալ կայանների պատրաստ լինելու հանգամանքը՝ գրենայի նկատմամբ վերահսկողությունը ժամանակին կիրառելու, գրենայի գործարանների 1933 թ. արտադրանքի վորակական գնահատումը ժամանակին կատարելու համար, պետական վերահսկողության ամբողջ աշխատանքն ավարտելով վոչ ուշ քան մարտի 1—ը։

գ. Ապահովել շերամապահների լայն ագրոզոոսպասարկումը, գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելով վաղ գարնանային կերակրման վրա (ավելացնելով ու բարելավելով գրենայի ինկուբացիայի վորակը), կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների տրամադրության տակ գտնվող ազատ շենքերը շերամի վորդերի կերակրման համար լրիվ օգտագործելու, մի քանի հարկա-

նի դարակների գործադրման վրա, կերակրման համար հատկացված տարածությունը մեկ կկլոգրամ գրենայի համար հասցնելով վոչ պակաս քան 30 քառակուսի մետրի:

5. Ճերմապահների ջերմապահական տեխնիկական անգրագիտությունը վերացնելու նպատակով, առաջարկել հանրապետությունների ժողկոմխորհներին և կենտկոմներին՝ պարտավորեցնել Լուսժողկոմատներին ջերմապահական շրջանների տարրական դպրոցներում մտցնելու ջերմապահության հիմունքների դասավանդումը:

6. 1934 թ. մթերման գները, բոժոժ հանձնողներին հացահատիկ և մետաքսեղեն մատակարարելու չափը թողնել 1933 թ. մակարդակին (համաձայն ԽՍՀՄ ժողկոմխորհի 1932 թ. սեպտեմբերի 9—ի վորոշման):

Առաջարկել ԱՍՖԽՀ ժողկոմխորհին կից մթերումների կոմիտեյին տեղերում հացահատիկ բաց թողնել հետևյալ կերպ—Մարտին՝ 35 տոկոսի չափով, մայիսին՝ 65 տոկոսի չափով, միաժամանակ ապահովելով գրենայի գործարաններ, շրջանային ջերմապահական մարմինների աշխատողներին և գյուղխագորներին հաց մատակարարելը:

Առաջարկել Թեթև Արդյունաբերության ժողկոմատին, հանրապետությունների մետաքսարդյունաբերության մարմիններին և մետաքստրեստներին՝ ապահովել մինչև մթերումների սկսվելը (մինչև հունիսի 1-ը) տեղերը համապատասխան ասորտիմենտի մետաքսի ապրանքների փոխադրումը, խան ասորտիմենտի մետաքսի ապրանքների փոխադրումը, պահանջի 75 տոկոսի չափով:

7. Առաջարկել Պետբանկի Անդրկովկասյան գրասենյակին՝ ժամանակին միջոցներ հատկացնել, համաձայն հաստատված պլանի, 1934թ. բոժոժի մթերման և գրենա— բոժոժային կամպանիայի կազմակերպչական ծախքերի համար՝ սկսած հունվար ամսից, իսկ հացահատիկի և մետաքսեղենի մատակարարման ոպերացիաների համար՝ այդ



ապրանքներն ուղարկելու մոմենտից մինչև դրանց իրացման մոմենտը:

8. Առաջարկել Անդրհողժողկոմատին, հանրապետությունների Հողժողկոմատներին, մետաքսագործական շրջանների կուսշրջկոմներին և ՄՏ Կայանների դիրեկտորներին՝ ապահովել ջերմապահության գծով նախատեսված բոլոր միջոցառումների անպայման կիրառումը (վորդերի կերակրման գործում ռացիոնալ մեթոդների արմատացումը, կոլտնտեսությունների վարչությունների կողմից պարտավորությունների կատարումը՝ շենքեր հատկացնելը, վորդերին կեր փոխադրելու համար փոխադրական միջոցներ տրամադրելը, կերի հանրայնացված ֆոնդի ճիշտ ամրացումը կոլտնտեսականներին և այլն), առանձին ուշադրություն դարձնել թթենու տնկիների պահպանության, նորոգման, խնամքի վրա, տեղերում լայն կերպով մշակել ջերմապահության պարտադիր ագրոզոտեխնիկական միջոցառումների կատարման հարցը, բոժոժի բերքատվությունը բարձրացնելու նպատակով:

Անդրժողկոմխորհի նախագահ՝ ՄՈՒՍԱԲԵԿՈՎ

ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմի քարտուղար՝ Լ. ԲԵՐԻԱ

## ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ 1934 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 1934 թվականի գարնան համար գարնանացան կուլտուրաների ցանքի պլանը հաստատել 331.793 հեկտարի չափով, հետևյալ բաշխմամբ՝ ըստ շրջանների, սեկտորների և կուլտուրաների. (տես աղյուսակ № 2):

2. Առաջարկել Հողժողկոմատին, Մատժողկոմատին, Մալտրեստին, Հայկոոպին և շրջգործկոմներին՝ 10 որվա ընթացքում վերջնական հաստատության համար ժողկոմխորհին ներկայացնել գարնանացանի պլանները՝ ըստ իրենց սիստեմների առանձին խորհտնտեսությունների:

3. Սահմանել, վոր կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների կողմից պետությանը պարտադիր կարգով հացահատիկ հանձնելը պետք ե կատարվի միայն այն տարածություններից, վորը սահմանված ե նրանց համար այս վորոշման հիման վրա: Կոլտնտեսությունների ու անհատական-աշխատավորական տնտեսությունների կողմից այս պլանից դուրս ցանված տարածություններից պետությանը պարտադիր կարգով հացահատիկ չի հանձնվում:

4. Առաջարկել Հողժողկոմատին, շրջգործկոմներին և կուսակցության շրջկոմներին՝

ա) 10 որվա ընթացքում շրջանների կոլտնտեսություններին ու մենատնտեսներին հասցնել ցանքի պլանները, նաև կայուն առաջադրանքներ տալ կուլակային տնտեսություններին: Ապահովել պլանների լայն քննարկումն ու մշակումը շրջաններում, կոլտնտեսություններում և գյուղխորհուրդներում, և բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնել, վոչ ուշ, քան մինչև փետրվարի 1-ն ավարտելու խորհտնտեսությունների, ՄՏ կայանների ու կոլտնտեսությունների արտադրա-ֆինանսական պլանները կազմելու գործը և առանձին կոլտնտեսային բրիգադներին արտադրական առաջադրանքներ տալը:

բ) Կազմակերպել կոլտնտեսություններում որինակելի նորմաների ու գնահատումների լայն քննարկումը, մանրազնին կերպով հաշվի առնելով 1933 թվականի փորձը և յուրաքանչյուր կոլտնտեսության կոնկրետ պայմանները՝ առանձին վերցրած:

Ժողկոմխորհը և Կենտկոմը նախազգուշացնում են, վոր աշխատանքի նորմաները պետք ե շերտավորված լինեն վոչ միայն ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության, այլև ըստ յուրաքանչյուր բրիգադի՝ հաշվի առնելով բրիգադներին ամրացված հողամասերի վորակը, քաշող ուժի և ինվենտարի վիճակը,



5. ա) Առաջարկել Հողժողկոմատին, Տրակտորկենտրոնին և շրջգործկոմներին՝ կերի ֆոնդ առանձնացնել բանող անասունների համար, կազմակերպել կենդանի քաշող ուժի ստուգատես, ապահովել նրանց հոգատար պահպանումն ու խնամքը, նաև նրանց լիակատար արտադրողական աշխատանքը գարնանացանի կամպանիայի ընթացքում: Առանձնացնել և բանող անասուններին ամրացնել ավելի քան պատրաստված ու նվիրված կոլտնտեսականներին և ապահովել բանող անասունների յերկշաբաթյա հանգիստը՝ գարնան դաշտային աշխատանքներն սկսելուց առաջ:

բ) Մինչև մարտի մեկն ավարտել տրակտորային պարկի, ավտոմեքենաների, գյուղատնտեսական մեքենաների և այլ ինվենտարի վերանորոգումը: Առաջարկել Մելխոզմնաբին, ապահովել հողը և ցանքերը մշակելու համար անհրաժեշտ գյուղատնտեսական մեքենաների ներմուծումն ու իրացումը վոչ ուշ քան մինչև մարտի մեկը, իսկ բերքահավաքի մեքենաների, խուրձ կապելու շպագատի և քաղհանի մշակման մեքենաների ներմուծումը՝ վոչ ուշ քան մինչև ապրիլի 25-ը:

Առաջարկել Ջրտնտեսությանն ու Տրակտորկենտրոնին՝

ա) Մինչև մարտի 20-ն ավարտել բոլոր ջրհանների վերանորոգումը և լիակատար կերպով կարգի բերել ջրհանները:

բ) Փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը կազմակերպել վոռոգման վողջ ցանցի վերանորոգման ու մաքրման և մանր ու մանրագույն ցանցը կարգի բերելու միամսյակ: Մարտի 15-ից մինչև ապրիլի 15-ն ընկած ժամանակամիջոցում ընդունել և ստուգել կատարված ջրտնտեսային աշխատանքները և վոռոգման ցանցի նախապատրաստվածությունը ջրելու աշխատանքներին.

գ) Վոչ ուշ քան մինչև փետրվարի մեկը ճշտել ջրելու նորմաներն ու ժամկետները՝ ըստ առանձին շրջան-

ների ու կուլտուրաների, այն հաշվով, որ մինչև մարտի մեկն ավարտված լինի ջրելու պլանների մշակումը՝ այդպիսիք կապակցելով ցանքի առաջադրանքների հետ։

6. Բերքատվության բարձրացումն ապահովելու նպատակով, ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմի և ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի հունվարի 22-ի որոշման հիման վրա՝

ա) Առաջարկել Հողժողկոմատին, բոլոր շրջգործկոմներին ու կուսակցության շրջկոմներին և ՄՏ Կայանների քաղբաժիններին՝ հատուկ ուշադրություն նվիրել գարնան վարի և ցանքի և ցանքից առաջ հողի մշակման աշխատանքների որակին, ապահովելով վաղ գարնանն աշնանավար հողերի պարտադիր ցաքանումը։ Տասն օրվա ընթացքում սահմանել ցանքի ժամկետներն ըստ շրջանների, գյուղերի և յուրաքանչյուր կուլտուրայի համար առանձին։ Ապահովել շարքացանի կիրառումը 31.000 հեկտար տարածության վրա, որից խորհտնտեսություններում 2,450 հեկտար և կոլտնտեսություններում ու անհատական հատվածում՝ 28.550 հեկտար (շրջանային պլանները հաստատում է Հողժողկոմատը)։ Մինչև մարտի 15-ն ավարտել ցանվելիք սերմացվի ստուգումը՝ նրանց ծլունակության ու աղբակալման տեսակետից և սերմացուի աղբակալում հայտաբերելու դեպքում միջոցներ ձեռք առնել անմիջապես լրացուցիչ զտում կատարելու ուղղությամբ։ Մինչև ցանքն սկսելն ստուգել յուրաքանչյուր կոլտնտեսության համար սահմանված ցանքի նորմաները, այն լիակատար կերպով համապատասխանեցնել ցանվող կուլտուրայի պահանջներին, հողի առանձնահատկություններին ու ցանելու յեղանակին՝ կանխելով ինչպես նոսր ցանքը, այնպես և ցանքի նորմաների բարձրացումը։ Մրիկով վարակված բոլոր շրջաններում կատարել սերմացվի հարյուր տոկոսային ախտահանում՝ չոր ախտահանումն ավարտելով ոչ ուշ քան մինչև փետրվարի 16-ը։ Դաշտային մկներով ու այլ վնասատուներով



վարակված շրջաններում կազմակերպել քիմիական միջոցներով վնասատուներին ոչնչացնելու ձեռնարկումներ՝ ինչպես ցանքադաշտերում, այնպես և նրանց սահմանակից հողամասերում։

Ապահովել մոլախոտերով աղբակալված գարնանացան հացահատիկային կուլտուրաների 100 տոկոսային քաղհանը՝ մինչև հասկեր գցելը, նաև մաքրել միջնակները, ճանապարհներն ու առուները, մինչ՝ մոլախոտերի սերմերը թափելը։

բ) Առաջարկել ՌԲՎ-ի Հայաստանի բաժանմունքին, մինչև փետրվարի մեկը Ժողկոմխորհի հաստատությանը ներկայացնել գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու աշխատանքների վերջնական պլանը։ Պարտավորեցնել ՌԲՎ-ին և շահագրգռված մարմիններին՝ նշված ժամկետին ավարտել գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու ձեռնարկումների կիրառման վերաբերյալ պայմանագրերի ձևակերպումը։ Առաջարկել ՌԲՎ-ի Հայաստանի բաժանմունքին՝ ապահովել ապարատուրայի վերանորոգումը և նրա, ինչպես և թույների փոխադրումը շրջաններ, կոլտնտեսություններ և խորհտնտեսություններ՝ պահանջվող քանակությամբ։

գ) Առաջարկել Հողժողկոմատին, մինչև փետրվարի մեկը ճշտել սերմացվի բալանսը՝ բոլոր կուլտուրաների վերաբերյալ և պարտավորեցնել Սայուզսեմենովոդին՝ ապահովել պակասող սերմացվի ժամանակին ներմուծումը։ Առաջարկել շրջգործկոմներին, ապահովել պլանների անպայման կատարումը սերմնաբուծական կոլտնտեսություններում, նաև ապրանքա-տեսակային ցանքերի պլանների կատարումը։ Մինչև ապրիլի տասը, ինչպես սերմնաբուծական, այնպես և ոչ-սերմնաբուծական կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում հաշվի առնել նախկին տարիներում ցանված բազմամյա խոտաբույսերի ցանքերը (առվույտ, եսպարցետ, կապույտ առվույտ) լավագույն հողամասերն ա-

առանձնացնել սերմարանների համար՝ ապահովելով նրանց պահպանումն անասունների ուտացնելուց և, վորպես խոտ հնձելուց։ Բոլոր սերմնաբուծական կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում կատարել աշնանացան հացահատիկային կուլտուրայի ցանքերի պարտադիր քաղհան՝ մինչ նրանց հասկեր գցելը։

դ) Առաջարկել Հողժողկոմատին՝ 10 օրվա ընթացքում ներկայացնել կոլտնտեսություններում ցանքաշրջանառություն կիրառելու վերջնական պլանը (յելնելով Անդրժողկոմխորհի 1933 թվականի նոյեմբերի 22-ի վորոշումից), բրիգադային հողամասերն առանձնացնելով գարնանացանի համար և հատուկ ուշադրություն նվիրելով հողաշինարարական աշխատանքներին։ Տեղերում կազմակերպել կոլտնտեսություններում ցանքաշրջանառության կիրառման աշխատանքների ընթացքի սիստեմատիկ ստուգում՝ կոլտնտեսականների լայն մասնակցությամբ։ 1934 թվականին ցանքաշրջանառություն կիրառել բոլոր խորհտնտեսություններում։

յե) Առաջարկել բոլոր շրջգործկոմներին՝ մինչև փետրվարի 5-ն ապահովել հիմնական կուլտուրաների վերաբերյալ պարտադիր ագրոկանոնների հրատարակումը՝ սիստեմատիկ վերահսկողություն սահմանելով նրանց կիրառման նկատմամբ։ Բոլոր կոլտնտեսություններում մշակել ագրոկանոններ և ագրոնարյադներ՝ բրիգադների համար. կազմակերպել ագրովերահսկողության հանձնաժողովներ և վորակի տեսչություններ, նրանց վրա դնելով ագրոձեռնարկումների կիրառման պատասխանատվությունը։

զ) Առաջարկել Հողժողկոմատին և շրջգործկոմներին՝ վոչ ուշ մինչև փետրվարի մեկն ավարտել հանքային պարարտացման պլանները կոլտնտեսություններին հասցնելը կոլտնտեսություններում կազմակերպելով նրանց լայն քննարկումը. հանքային պարարտանյութերի ճիշտ օգտագործման պատասխանատվությունը դնել ՄՏ կայանների



ու խորհտնտեսությունների դիրեկտորների վրա։ Պարարտանյութերի խառնումն ու օգտագործումը և նրանց նկատմամբ հրահանգումը կատարել ագրոանձնակազմի ամիջական հսկողությամբ։ Հանքային պարարտացման ժամանակ ապահովել յեղած հանքային պարարտանյութեր ցանող մեքենաների 100 տոկոսային օգտագործումը։ 10 օրվա ընթացքում ավարտել ՄՏ կայանների կոմպլեկտավորումը քիմիական պարարտացման պարագաներով՝ հատուկ հսկողություն սահմանելով հանքային պարարտանյութերի համար պահեստներ կառուցելու և պարարտանյութերը պահպանելու ու օգտագործելու նկատմամբ։ Հատուկ ուշադրություն նվիրել գոմաղբային պարարտանյութերի ճիշտ ու լրիվ օգտագործմանը կազմակերպելով նրանց ժամանակին դաշտ փոխադրելը և դաշտում փռելը։

8, Առաջարկել Հողժողկոմատին՝ 10 օրվա ընթացքում Ժողկոմխորհի ու Կենտկոմի քննության ներկայացնել բամբակի ու ծխախոտի ցանքն անցկացնելու վերաբերյալ վորոշման նախագիծը։

9. Առաջարկել բոլոր շրջկոմներին ու ՄՏ կայանների քաղբաժիններին՝ հաշվի առնելով աշխատավոր մենատնտեսների աճող ձգտումը դեպի կոլտնտեսություններ, վորն առաջացել է կոլտնտեսային շինարարության ասպարեզում ձեռք բերված հաջողությունների հիման վրա, կոլտնտեսություններ ընդունելիս վճռական պայքար մղել ինչպես կոլտնտեսությունները կուլակային ու խորթ տարրերի սողոսկման փորձերի, այնպես և մի շարք կոլտնտեսություններում հանդես յեկող ինքնապարփակման արտադրության մեջ ստուգված առաջավոր աշխատավոր մենատնտեսներին կոլտնտեսություն չընդունելու տենդենցների դեմ։

10. ՀՍԽՀ Ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը պահանջում են բոլոր կուսակցական, խորհրդային ու տնտեսա-

կան կազմակերպություններից, անմիջապես ու լիակատար կերպով ձեռնամուխ լինել գարնանացանի կամպանիայի նախապատրաստվելու մարտական խնդիրների կենսագործմանը և վճռական պայքար մղելով գյուղում կուլակային ու դաշնակային ագիտացիայի դեմ, մաքրելով կոլտնտեսությունները նրանց մեջ սողոսկած կուլակային տարրերից ամեն կերպ բարձրացնելով առաջամարտիկ կուսակցականի ու կոմյերիտականի քաղաքական ու ագրոտեխնիկական ղեկավարության մակարդակը՝ գյուղում, կոլտնտեսության մեջ ու բրիգադում, վճռականորեն պայքարելով մենատնտեսի թերագնահատման դեմ, կոլտնտեսականներին ու աշխատավոր մենատնտեսներին մոբիլիզացիայի ենթարկելով վորակի, ագրոտեխնիկական անգրագիտության վերացման ու բերքատվության բարձրացման համար մղվող պայքարի շուրջը—ապահովել 1934 թվականի գարնանացանի կամպանիայի բոլոր առաջադրանքների հաջող կատարումն ու բարձր վորակը

Աղյուսակ № 1

| Գարնանացան հացահատիկային կուլտուրաներ | Ադրբ. ԽՍՀ Ընդամենը | Ադրբ. ԽՍՀ Այդ թվում Խորհտնտես. | Ադրբ. ԽՍՀ Այդ թվում կոլտնտեսութ. և անհատ. գյուղաց. | ՀՍԽՀ Ընդամենը | ՀՍԽՀ Այդ թվում Խորհտնտես. | ՀՍԽՀ Այդ թվում կոլտնտեսութ. և անհատ. գյուղաց. | ՎՍԽՀ Ընդամենը | ՎՍԽՀ Այդ թվում Խորհտնտես. | ՎՍԽՀ Այդ թվում կոլտնտեսութ. և անհատ. գյուղաց. | ԱՍՖԽՀ Ընդամենը | ԱՍՖԽՀ Այդ թվում Խորհտնտես. | ԱՍՖԽՀ Այդ թվում կոլտնտեսութ. և անհատ. գյուղաց. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ցորեն | 20,25 | 2,25 | 18.0 | 125,2 | 1.2 | 124.0 | 53,3 | 0,3 | 53,0 | 198,75 | 3.75 | 195,0 |
| Գարի | 38,92 | 0.92 | 38.0 | 97,4 | 3,4 | 94.0 | 77,5 | 5,5 | 72.0 | 213.82 | 9,82 | 204.0 |
| Վարսակ | 6,96 | 3,96 | 3,0 | 3,2 | 0,7 | 2,5 | 4,0 | 1,5 | 2,5 | 14,16 | 6.16 | 8.0 |
| Հորեկ | 18,82 | 0,82 | 18,0 | 3,0 | — | 3,0 | 6,6 | 0.6 | 6.0 | 28,42 | 1,42 | 27,0 |
| Ցեղխառնուրդ | 5,23 | 1,28 | 4,0 | 1,0 | — | 1,0 | 384,0 | 4,0 | 380,0 | 390,23 | 5,23 | 385,0 |
| Չալթուկ | 24,00 | — | 24,0 | 0,4 | — | 0,4 | — | — | — | 24.4 | — | 24,4 |
| Լոբեղեն բույսեր | 25,68 | 1,78 | 23,9 | 1,7 | — | 1,7 | 1,6 | 0,6 | 1,0 | 28,98 | 2,38 | 26,6 |
| Այլ հացահատիկ | 3,26 | 0,26 | 3,0 | 19,2 | 0,2 | 19,0 | 11,8 | 1,8 | 10,0 | 34,26 | 2,26 | 32,0 |
| Ընդ. հացահ. | 143,12 | 11,22 | 131,9 | 251,1 | 5,5 | 145,6 | 538,8 | 14,3 | 524,5 | 933,02 | 31,02 | 902,0 |
| **Տեխնիկական կուլտուրաներ** | | | | | | | | | | | | |
| Բամբակ | 191,00 | 11,00 | 180·0 | 18.0 | — | 18,0 | 7,15 | 0·15 | 7.0 | 216 15 | 11,15 | 205,0 |
| Վուշ | 3.25 | 0,55 | 3·0 | 11,0 | — | 11,0 | 1,0 | — | 1,0 | 15,25 | 0,25 | 15,0 |
| Կանեփ | 4.8 | 0,3 | 4,5 | — | — | — | — | — | — | 4.8 | 0.3 | 4,5 |
| Քանդիր | 4,0 | 0,5 | 3,5 | — | — | — | — | — | — | 4,0 | 0.5 | 3,5 |
| Շաքար. ճակնդեղ | — | — | — | 0,9 | 0,4 | 0.5 | 4,5 | 0,5 | 4,0 | 5,4 | 0,9 | 4,5 |
| Արևածաղիկ | 3,04 | 0,44 | 2,6 | 0,4 | — | 0,4 | 6,8 | 0,6 | 6,2 | 10,24 | 1,04 | 9,2 |
| Ծխախոտ | 3,26 | 0,06 | 3,2 | 2,5 | 0,2 | 2,3 | 19,2 | — | 19,2 | 24,96 | 0,26 | 24,7 |
| Քունջութ | 1,2 | — | 1,2 | — | — | — | — | — | — | 1,2 | — | 1,2 |
| Արախիս | 0.9 | 0,1 | 0,8 | — | — | — | 0,73 | 0,13 | 0,6 | 1,63 | 0,23 | 1,4 |
| Այլ տեխնիկական | 0,29 | 0,09 | 0,2 | 0,3 | 0,2 | 0·1 | 0,8 | 0,1 | 0,7 | 1,39 | 0,39 | 1,0 |
| Ընդամեն. տեխնիկակ. | 211,74 | 12,74 | 199,0 | 33,1 | 0,8 | 32,3 | 40,18 | 1,48 | 38,7 | 285,02 | 15,02 | 270,0 |
| **Բանջարանոցային** | | | | | | | | | | | | |
| Կարտոֆիլ | 12,00 | 0,9 | 11.1 | 10,9 | 0,9 | 10,0 | 18,2 | 0,6 | 17,6 | 41.1 | 2.4 | 38,7 |
| Բանջարանոցներ | 16.19 | 4,19 | 12,0 | 7,6 | 1,6 | 6,0 | 18 5 | 2,5 | 16,0 | 42.29 | 8,29 | 34,0 |
| Սեխանոցներ | 10,74 | 0,74 | 10,0 | 1,1 | 0,1 | 1,0 | 3,1 | 0,1 | 3,0 | 14,94 | 0,94 | 14,0 |
| Ընդ. բանջ. | 38,93 | 5,83 | 33,1 | 19·6 | 2,6 | 17,0 | 39,8 | 3,2 | 36,6 | 98,33 | 11,63 | 86,7 |
| **Կերաբույսեր** | | | | | | | | | | | | |
| Միամ. խոտեր | 3·7 | 1,9 | 1,8 | 8,9 | 0,9 | 8,1 | 15,9 | 0,9 | 15,0 | 28,5 | 3,7 | 24,8 |
| Բազմամ. » » | 8,6 | 2,8 | 5,8 | 3,7 | 0,7 | 3,0 | 5,1 | 1,8 | 3,3 | 17,4 | 5,3 | 12,1 |
| Արմատապտուղներ | 1,96 | 0,46 | 1,5 | 1,1 | 0,1 | 1,0 | 0.8 | 0,3 | 0.5 | 3,86 | 0.86 | 3,0 |
| Սիլոս | 3,83 | 0,83 | 3,0 | 2·7 | 0,7 | 2,0 | 4,1 | 1,4 | 2,7 | 10,63 | 2,93 | 7,7 |
| Ընդ. կերաբույսեր | 18,09 | 5,99 | 12,1 | 16,4 | 2,4 | 14,0 | 25,9 | 4,4 | 21,5 | 60,39 | 12,79 | 47,6 |
| Անցյալ տարիների խոտ. | 9,1 | 5,6 | 3,5 | 11,5 | 3,2 | 8,3 | 2,5 | 1,0 | 2,5 | 24,1 | 9,8 | 14,3 |
| Ընդամեն ցանք. | 420,98 | 41,38 | 379,6 | 331,7 | 14,5 | 317,2 | 648,18 | 24,38 | 623,8 | 1400,86 | 80 26 | 1320,6 |

Աղյուսակ № 2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ 1934 ԹՎԱԿԱՆԻ ՑԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ

| Շրջաններ և Քաղաքներ | Հացահատիկային | | | Տեխնիկական | | | Կերի | | | Բանջարանոցային | | | Ընդամենը ցանք | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | Այդ թվում | | Ընդամենը | Այդ թվում | | Ընդամենը | Այդ թվում | | Ընդամենը | Այդ թվում | | Ընդամենը | Այդ թվում | |
| | | Խորհտնտ. | Գյուղացիական տնտեսութ. | | Խորհտնտ. | Գյուղացիական տնտեսութ. | | Խորհտնտ. | Գյուղացիական տնտեսութ. | | Խորհտնտ. | Գյուղացիական տնտեսութ. | | Խորհտնտ. | Գյուղացիական տնտեսութ. |
| Աբարանի շրջան | 19800 | — | 19800 | 629 | — | 629 | 894 | — | 894 | 315 | — | 315 | 21638 | — | 21638 |
| Աղբաբայի » » | 16561 | 378 | 16183 | 1981 | 82 | 1899 | 1090 | 301 | 789 | 92 | 19 | 73 | 19724 | 780 | 18944 |
| Ալլահվերդու » » | 4943 | 102 | 4841 | 559 | 210 | 349 | 686 | 3 | 673 | 1255 | 154 | 1101 | 7443 | 539 | 6904 |
| Արթիկի » » | 24000 | 8 | 23992 | 2514 | — | 2514 | 577 | 3 | 574 | 900 | — | 900 | 27991 | 11 | 27980 |
| Ախտայի » » | 23667 | 11 | 23656 | 230 | — | 230 | 679 | 11 | 668 | 433 | 11 | 422 | 25009 | 33 | 24976 |
| Աշտարակի » » | 4810 | — | 4810 | 245 | — | 245 | 415 | — | 415 | 100 | — | 100 | 5570 | — | 5570 |
| Բասարգեչարի » | 17398 | 600 | 16798 | 37 | — | 37 | 2100 | 1100 | 1000 | 370 | 25 | 345 | 19905 | 1755 | 18180 |
| Գորիսի » » | 5769 | — | 5769 | 636 | — | 636 | 488 | — | 438 | 435 | — | 435 | 7278 | — | 7278 |
| Դիլիջանի » » | 8330 | 76 | 8254 | 277 | — | 277 | 682 | 25 | 657 | 1225 | 32 | 1193 | 10514 | 133 | 10381 |
| Իջևանի » » | 3030 | — | 3030 | 839 | — | 839 | 420 | — | 420 | 350 | — | 350 | 4639 | — | 4639 |
| Ղարաքիլիսայի » | 9685 | 355 | 9330 | 352 | 94 | 258 | 1345 | 178 | 1167 | 1790 | 322 | 1468 | 13172 | 949 | 12223 |
| Ղափանի » » | 4990 | 150 | 4840 | 677 | — | 677 | 243 | 31 | 212 | 460 | 99 | 361 | 6370 | 280 | 6090 |
| Քեշիշքենդի » » | 6618 | 76 | 6542 | 129 | — | 129 | 472 | 28 | 444 | 135 | 1 | 134 | 7354 | 105 | 7249 |
| ոտայքի » » | 10300 | 342 | 9958 | 598 | — | 598 | 643 | 53 | 590 | 600 | 60 | 540 | 12141 | 455 | 11686 |
| Լենինականի » » | 23038 | 1250 | 21788 | 1780 | 400 | 1380 | 2818 | 1410 | 1408 | 1800 | 850 | 950 | 29436 | 3910 | 25526 |
| Մարտունու » » | 10200 | 215 | 9985 | 660 | 25 | 635 | 865 | 210 | 655 | 755 | 19 | 736 | 12480 | 469 | 12011 |
| Մեղրու » » | 1390 | 23 | 1367 | 51 | — | 51 | 240 | 1 | 239 | 190 | 22 | 168 | 1871 | 46 | 1825. |
| Ն. Բայազետի » | 8302 | 265 | 8037 | 666 | 10 | 656 | 712 | 57 | 655 | 564 | 6 | 558 | 10244 | 338 | 9906 |
| Փաշալվի » » | 7850 | — | 7850 | 62 | — | 62 | 186 | — | 186 | 100 | — | 100 | 8198 | — | 8198 |
| Սիսիանի » » | 8856 | 393 | 8463 | 427 | 17 | 410 | 2239 | 284 | 1955 | 301 | 16 | 285 | 11823 | 710 | 11113 |
| Ստեփանավանի » | 8515 | 432 | 8083 | 548 | 22 | 526 | 3605 | 310 | 3295 | 2535 | 61 | 2474 | 15203 | 825 | 14378 |
| Թալինի » » | 8570 | 119 | 8451 | 844 | 11 | 833 | 968 | 118 | 850 | 70 | 5 | 65 | 10452 | 253 | 10199 |
| Շամշադինի » » | 3411 | 8 | 3403 | 389 | — | 389 | 247 | 2 | 245 | 835 | 1 | 834 | 4882 | 11 | 4781 |
| Վաղարշապատի » | 2020 | 205 | 1815 | 4700 | — | 4700 | 1235 | 362 | 873 | 800 | 70 | 730 | 8755 | 637 | 8118 |
| Ղամարլուի » » | 1600 | 22 | 1578 | 5050 | — | 5050 | 991 | — | 991 | 1395 | 20 | 1375 | 9036 | 42 | 8994 |
| Վեդու » » | 5100 | 410 | 4690 | 2000 | — | 2000 | 929 | 320 | 609 | 216 | 57 | 159 | 8245 | 787 | 7458 |
| Ղուրդուղուլու » | 2332 | 287 | 2045 | 6300 | — | 6300 | 2080 | 630 | 1450 | 1165 | 320 | 845 | 11877 | 1237 | 10640 |
| Յերևանի քաղ. » | 15 | 15 | — | — | — | — | 10 | 10 | — | 518 | 518 | — | 543 | 543 | — |
| Ընդամենը | 251100 | 5742 | 245358 | 33180 | 871 | 32309 | 27809 | 5517 | 22292 | 19704 | 2688 | 17016 | 331793 | 14818 | 316975 |

ՄՅՆՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍԽՀ—ССРА им. А. Мясникяна

1934թ. 165

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

ЦЕНА 30 К.

II
27899

О плане весеннего сева и мероприятиях по развитию сельского хозяйства на 1934 год
Постановления СНК ЗСФСР, ЗКК ВКП(б), СНК Армении и ЦК КП(б) А.

Партиздат 1934 Эривань